

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽՈՒՆԿ ՈՒ ԱՂՕԹՔ ԱՆՈՆՑ ՅՈԳԻՆԵՐՈՒՆ ԽՈՅԱՆՔ ԴԵՊԻ ԼՈՒՍԱՇՈՂ ԱՊԱԳԱՅ

Կանգնած ենք հայոց Յեղասպանության 93-րդ տարեդարձի ոգեկոչման եւ մեր անժամանցելի Ազգային Դատի հետապնդման ուխտի վերանորոգման նախասեմին: Մեր 1.5 միլիոն նահատակներուն արեան կանչը վերստին կը խոռովէ մեր հոգիները: Այդ կանչը աւելի քան մէկ ու կէս միլիոն հաշուող նահատակներուն մշտանորոգ պատգամն է մեզի փոխանցող: Ճանաչում, Դատապարտում եւ Հատուցում պահանջող կանչ մը, որուն կենսագործումով միայն իրենց հանգիստը պիտի գտնեն իրենց անթաղ ոսկորները:

Տարակոյս չկայ՝ ամէն տարի, ապրիլեան այս դժիբն օրերուն, ամէն հայ ինքնութիւն կ'ապրի ներքին սուր մորմոք, ժայթքուն ցատում եւ վրիժառական հոգեխուով ապրումներ:

Անոր ներքին խոր վիշտը արտայայտութիւնն է Ատանայի Չարդով սկսած (300 հազար), ու քիչ ժամանակ անց, իր պատմական հողերուն վրայ շարունակուած աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ հայերու Յեղասպանութեան:

Յանցանքնի՞ն: Առան մտնելու օսմանական կայսրութեան ընկերային, քաղաքական, ծաւալապաշտական ու ձուլման գաղափարախօսութիւններուն մէջ, կը բաւարարուինք մէկ բացատրութեամբ. «Որովհետեւ ՀԱՅ ԷՒՆ», ինչպէս ըսաւ Ազնաւուր, իր երգերէն մէկուն մէջ:

Անոր ապրած ցատումը արտայայտութիւնն է այն սոմոն, անբարոյ ու գեհնային Չարդերու հեղինակ Օսմանեան կայսրութեան ժառանգորդ, արդի Թուրքիոյ եւ, մեծապետական պետութիւններ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու ու Մեծն Բրիտանիոյ ուրացումներուն: Անոնք ոչ միայն չեն ճանչնար, նաեւ՝ Հոռոմի Պապ Յովհաննէս Պետրոս Բ.-ի Նոյնեմբեր 10-ի հրապարակած փաստաթուղթով բնորոշուած ժողովուրդներու պատմութեան մէջ գործուած առաջին Յեղասպանութիւնը, որու մասին կ'ըսէ Պապը. « 20-րդ դարը նշանակուեցաւ ծայրայեղ մի դաժանութեամբ: Դարասկիզբի Հայոց Յեղասպանութիւնը նախաբանը եղաւ յետագայ սարսափներուն», ընդհակառակը՝ կ'ուրանան: Թուրքիա, քաջալերուած այդ երկու գերզօր պետութիւններու զօրակցութեամբ, ոչ միայն կ'ուրանայ մարդկութեան դէմ գործած իր ոճիրը, ընդհակառակը կը խեղաթիւրէ միջազգայնօրէն հաստատուած պատմական ճշմարտութիւնները, աշխատելով ապացուցանել, որ հայը ցեղասպանութիւն գործած է, եւ ոչ թէ Օսմանեան կայսրութիւնը... Ան-

գամ, Թուրք իշխանութիւնները, լկտիաբար բարձրացուցին Թուրքերու դէմ հայերու որպէս թէ գործած ցեղասպանութիւնը խորհրդանշող յուշակոթող մը:

Անոր ապրած ցատումը արտայայտութիւնն է հայոց դէմ կատարուած 1915-ի Յեղասպանութեան շարունակութեան:

Յեղասպանութիւնը կը շարունակուի «Ակօս»ի անգլոգական խմբագիր Հրանդ Տինքի սպանութեան բնոյթով:

Յեղասպանութիւնը կը շարունակուի փոքրամասնութիւնները ճնշող 301 յօդուածի առկայութեամբ, Թուրքիոյ աշխարհատարածքին վրայ:

Յեղասպանութիւնը կը շարունակուի Հայաստանի սահմանները տնտեսական շրջափակման տակ պահելով: Շրջափակման վերացումը, Թուրքիոյ կողմէ կը պայմանաւորուի հերոսական Արցախի վերադարձով, մարդկութեան դէմ գործուած Սումկայիթեան մերթրեայ ցեղասպանութեան ողբերգութեան հեղինակ, ցեղասպան Ատրպէյճանին, մեկնակէտ ընդունելով անոր հողային ամբողջականութեան պահպանման սկզբունքը:

Հակառակ այդ բոլորին...

Այո, հակառակ այդ բոլորին, մեր արդի ժամանակներուն, հայոց ու մարդկութեան դէմ գործուած 1915-ի Յեղասպանութիւնը կը շարունակուի, այսպէս կոչուող, «ժողովուրդներու պաշտպանութեան» ռահվիրաներ, ԱՄՆ-ի եւ Մեծն Բրիտանիոյ անտարբերութեամբ յատկանշուած մեղսակցութեամբ: Այստեղ անգամի մը համար եւս կը հաստատենք այն ճշմարտութիւնը թէ, Հայոց դէմ կատարուած Յեղասպանութիւնը եթէ ճանաչում, դատապարտում եւ հատուցում առցած ըլլար աշխարհի գերզօր պետութիւններու կողմէ, նոր ցեղասպանութիւններ պիտի չկրկնուէին, երրորդ Համաշխարհային Պատերազմէն, Ափրիկէ, ապա՝ Սումկայիթ:

Անոր ապրած վրիժառական հոգեխուով ապրումները, վերջապէս, արտայայտութիւններն են այն անարդար վերաբերմունքներուն, որոնց ենթակալ կը դառնայ մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներու անմեղ յիշատակը: Անարդար, անճիշտ յերիւրածոյ գնահատութիւններ կը տրուին մեր նահատակներուն: Անգամ կ'անտեսուին ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորկընթաուներու, գերմանացի Օհաննէս Լեփսիուսներու, Քարլ Լիբկնիխտերու, Ռուս ազգի գա-

ԿՈՉ՝ ԼԱՅՆԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՉԱՍԱԽՄԲՈՒՄԻ

Հայոց եղեռնի 93-րդ տարելիցի այս օրերուն, երբ կ'ոգեկոչենք մեր ազգի բիրաւոր նահատակներու յիշատակը, Հայաստանի Հանրապետութիւնը կը դիմագրաւէ իր նորագոյն պատմութեան մեծագոյն տագնապներէն մին:

Նախագահական վերջին ընտրութիւններու ընթացքին ու անոր յաջորդած ողբերգական իրադարձութիւններու հետեւանով, Հայ ժողովուրդը երկփեղկուած է Հայրենիքէն ներս, թէ սփիւռփ տարածքին: Առաջնահերթութիւններ կը տարբերին կուսակցութեան-կուսակցութիւն, կազմակերպութեան-կազմակերպութիւն, մոյնիսկ անհատ անհատ: Ոմանց համար կարեւորագոյնը Հայաստանի կայունութիւնն է, ուրիշներու համար Արցախի ապահովութիւնն ու անկախ գոյութեան պահպանումը, իսկ այլոց համար Հայաստանի մէջ իսկական ժողովրդավարութեան հաստատումը:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը համոզուած է, որ այս բոլոր նախապատուութիւնները միաժամանակ, մոյնեան կարեւոր են ու համատեղելի ու մենք պարտաւոր ենք, իշխանութիւն թէ ընդդիմութիւն, Հայաստան թէ սփիւռփ, դրսեւորելու բաւարար կամք, քաջութիւն եւ լայնախոհութիւն, ապահովելու համար մեր ժողովուրդի համախմբումը այս հարցերուն շուրջ եւ միասնաբար պայքարելու անոնց իրագործման ու մեր առջեւ ցցուած այլ մարտահրաւերներու յաղթահարման ուղղութեամբ:

Մեր ժողովուրդի համախմբումը ապահովելու համար կան լուծման կարօտ հրատապ հարցեր, որոնց անդրադարձան նաեւ վերջերս երոպական կառոյցները: Մեկնելով այն իրողութեանէն որ իշխանութիւններու ձեռքերուն մէջ են անհրաժեշտ բոլոր յմակները, իրենցմէ է որ կ'ակնկալուի ապահովել հետեւել պահանջները.-

Ա.- Ազատել քաղաքական բոլոր բանտարկեալները.

Բ.- Ստեղծել խորհրդարանական ու արտախորհրդարանական կուսակցութիւններէ ու նաեւ հասարակութեան ներկայացուցիչներէն բաղկացած յանձնաժողով, ֆննելու համար Մարտ 1-ի եւ 2-ի իրադարձութիւններու բոլոր ծախքերը: Նաեւ, համապատասխան հատուցում ապահովել բոլոր գոհուածներուն ու վիրաւորներուն:

Գ.- Դադարեցնել ամէն տեսակի քաղաքական հալածանքները եւ վերականգնել ընդդիմադիր կուսակցութիւններու ազատ գործունէութեան իրաւունքը.

Դ.- Բեկանել Ազգային ժողովի որոշումը՝ ցոյցերն ու հանրահաւաքները արգելելու մասին.

Ե.- Հանրային հեռուստատեսութեամբ հաւասար եթեր տրամադրել ընդդիմադրութեան տեսակետներուն.

Զ.- Սկսիլ երկխօսութիւն՝ իշխանութեան եւ ժողովուրդի միջեւ հետեւեալ հարցերու շուրջ.

-Տնտեսական համակարգը ենթարկելու արմատական փոփոխութեան, առաջին հերթին վերացնելով ամէն տեսակի հովանաւորչութիւններն ու մեծաշնորհները եւ ապահովելու համահասարակ պայմաններ՝ Հայաստանի բոլոր քաղաքացիներուն եւ արտասահմանցի ներգրողներուն առջեւ.

-Դատական համակարգին տալու ամբողջական անկախութիւն ու զայն ձեռքազատելու գործադիր իշխանութեան բոլոր տեսակի միջամտութիւններէն եւ նշումներէն.

-Զանգուածային լրատուութեան միջոցներու ազատ գործունէութեան իրաւունքը վերականգնելու, բացառելով իշխանութիւններու կողմէ քաղաքական հաղորդումներու վերահսկումը: Նաեւ՝ կարճ ժամանակուայ ընթացքին եթեր վերադարձնելու «Ա.1+» եւ «Նոյնեան Տապան» հեռուստաիւրիւնները, ապահովելու համար քաղաքացիական տեղեկութիւն ստանալու հասարակութեան տարրական իրաւունքը.

-Ընտրական գործընթացներու նկատմամբ ժողովուրդի վստահութիւնը վերականգնելու նպատակով, հիմնական փոփոխութեան ենթարկելու Հայաստանի ընտրական օրէնագիրքը՝ առաջին հերթին ապահովելով անկախ յանձնաժողովներու կազմութիւնը.

-Վերոյիշեալ հարցերու լուծումը երաշխաւորելու, կատարելու արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ.

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը համոզուած է որ, անյետաձգելի այս հարցերու նկատմամբ լուրջ վերաբերմունք ու մտնեցում մտցաբերելով միայն, կարելի կը դառնայ Հայաստանը դուրս բերել իր դիմագրաւած նգնաժամէն, վերականգնելու ժողովուրդի հաւատքը իր իշխանութիւններուն հանդէպ, համախմբելու մեր ազգային նպատակներուն շուրջ եւ միասնաբար գործելու՝ յանուն Հայաստանի ու Արցախի քաղաքացիական ու պետականութեանց հզօրացման, յանուն Հայաստան-սփիւռփ կապերու ամրապնդման եւ յանուն Հայկական Յեղասպանութեան նախաձեռնման եւ մեր իրաւունքներու վերափոխման:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՐԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆ ԱՆՑԿԱՑՐԵՑ ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՅԵՏՈՅ ԱՌԱՋԻՆ ԱՐՏՕՆՈՒԱԾ ԶԱՆՐԱՅԱԿԱՔԸ



Հագարաւորներ մասնակցեցան Մարտ 1-ի դէպքերէն ետք ընդդէմադրութեան առաջին հանրահաւաքին

Մօտ երկամսեայ ընդմիջու- մից յետոյ շաբաթ օրը տեղի ունեցաւ ընդդէմութեան առաջին հանրահաւաքը:

Երկար ու յամառ պայքարից յետոյ ընդդէմութեան ներկայացուցիչներն ի վերջոյ հարկադրեցին գործող իշխանութիւններին արտօնել հանրահաւաք: Թոյլտուութիւնը ստացել էր «Կանայք յանուն խաղաղութեան» հասարակական կազմակերպութիւնը, որն էլ հանրահաւաքին մասնակցելու համար հրաւիրել էր ընդդիմադիր միւս կուսակցութիւններին: Հարթակի վրայ էին ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը, «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը, ՍԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեանը, այլ ընդդիմադիր կուսակցութիւնների ներկայացուցիչներ, ՀՀ հիմնադիր նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի կինը՝ Լիւդմիլա Տէր-Պետրոսեանը:

Հանրահաւաքը սկսուելուց ընդամենը անց տարածքը հոսանքազրկուեց: «Մէկ ա, պայքարը շարունակուելու է», - գոռում էին հանրահաւաքի մասնակիցները: Հոսանքի անուցումը կազմակերպիչները միացրեցին շարժական գեներատորից: Բայց մինչ այդ խնդիրը կը լուծուէր, Մանկական զբօսայգում հաւաքուած հազարաւոր մարդիկ առանց ընդմիջման, մի քանի րոպէ շարունակ վանկարկում էին «Սերժիկ, հեռացիր», «Ազատութիւն», «Լեւոն, նախագահ»: Ելոյթ ունեցողները հիմնականում կանայք էին: Ակադեմիկոս Ռաֆայէլ Ղազարեանի այրին՝ Գրիգելլա Ղազարեանը, պատմեց, թէ ինչպէս են իր եւ իր դստեր հետ վարուել Մարտի 1-ին եւ ինչպիսի դաժանութեամբ են ծեծել ոստիկաններն իրենց: «Այս ցաւը չի անցնելու մեր միջից երբեք: Բայց մենք, միեւնոջն է, պայքարելու ենք», - յայտարարեց Գրիգելլա Ղազարեանը:

Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի պետ Ալեքսանդր Արզումանեանի կինը՝ Մելիսա Բրաունը, յայտարարեց, որ իրենք Հիւսիսային պողոտայում եւ Ազատութեան հրապարակում կանգ-

նելու են այնքան, մինչեւ իրենց ամուսիններին, եղբայրներին, ընկերներին, հայրերին ու որդիներին ազատ արձակեն: «Մեր պայքարը շարունակուում է: Եթէ Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը մտածում են, որ ժողովրդին ծեծելով, սպաննելով, բանտեր գցելով կարող են սպաննել մեր պայքարի ոգին, նրանք չարաչար սխալուում են: Եթէ մինչեւ Մարտի 1-ը Հայաստանում հնարաւոր էր գտնել մի մարդ, որը դեռ պատրաստ էր հանդուրժել Ռոբերտ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի յանցաւորութիւնը, ապա այն բանից յետոյ, երբ նրանք կրակեցին սեփական քաղաքացիների վրայ, թափեցին ժողովրդի արիւնը, այսօր նման մարդ հնարաւոր չէ գտնել», - յայտարարեց Նիկոլ Փաշինեանի կինը՝ Աննա Յակոբեանը:

Բոլոր ելոյթներն ընդմիջուում էին «Լեւոն, նախագահ», «Ազատ, անկախ Հայաստան» եւ պայքարի այլ կարգախօսների վանկարկումներով:

Ժամը 17-ի սահմաններում, սակայն, տեղանքը կրկին հոսանքազրկուեց: Լեւոն Տէր-Պետրոսեանի թիմի անդամ Լեւոն Զուրաբեանն այդպէս էլ չկարողացաւ աւարտել իր ելոյթը: Մի քանի ոստիկանների հետ հարթակ բարձրացած Կենտրոնի ոստիկանութեան բաժնի պետի տեղակալ Տարօն Բաղդասարեանը պահանջում էր դադարեցնել հանրահաւաքը: Քանի որ հոսանքն այդպէս էլ չմիացրեցին, հանրահաւաքի մասնակիցները երթով շարժուեցին դէպի Հիւսիսային պողոտայ: Ու իշխանութիւնների հերթական գործողութիւնը կրկին շրջուեց նրանց դէմ: Երթի ընթացքում, երբ մարդիկ վանկարկում էին պայքարի բոլոր կարգախօսները, նրանց ողջունում էին մայիսի կանգնած մարդիկ, մեքենաների միջից միացնում էին շշակները, եւ ձեռքները բռնուցք արած՝ մարդիկ երթի մասնակիցներին յայտնում էին իրենց զօրակցութիւնը: Երթին միացան բազմաթիւ մարդիկ, ովքեր հանրահաւաքի մասին տեղեակ չէին եղել:

ԴԱԻԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ, ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՊԵՏՔ Է ԱՄՐԱԳՐՈՒԻ ՕՐԵՆՔՈՎ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:
Եւրոպայի խորհրդի խորհրդանական վեհաժողովում (ԵԽՆՎ) Հայաստանի Ազգային ժողովի պատուիրակութեան ղեկավար Դաւիթ Յարութիւնեանը այսօր կարծիք յայտնեց, որ ընդդիմադիր քաղաքական ուժերի մասնակցութիւնը երկրի կառավարմանը պէտք է կարգաւորուի օրէնքով:

«Որոշ երկրներում այդ երաշխիքները [երկրի կառավարմանը ընդդիմութեան մասնակցութեան] գործում են աւանդութի ուժով, որոշ երկրներում դրանք օրէնսդրորէն ամրագրուած են: Ես կարծում եմ, որ Հայաստանում պէտք է օրէնսդրորէն ամրագրել այդ երաշխիքները, որովհետեւ դա իսկապէս կ'ստեղծի շատ աւելի լուրջ հենք զարգացման համար», - լրագրողների հետ հանդիպմանը անդրադառնալով ԵԽՆՎ-ի բանաձեւի այդ կէտին, որտեղ ընդգծուում է քաղաքական ուժերի բաց եւ կառուցողական երկխօսութեան, ընդդիմութեան դե-

րի մեծացման անհրաժեշտութիւնը, ասաց Յարութիւնեանը:

Եւրախորհրդի խորհրդանական վեհաժողովի բանաձեւի «բուն էութիւնը», ըստ նրա, հետեւեալն է. - Հայաստանը պէտք է անյապաղ կատարի քայլեր ժողովրդավարական ինստիտուտների գործունէութիւնը բարելաւելու համար»: Իշխող կոալիցիան դրան կ'անդրադառնայ «շատ շուտով». - «Ենթադրում եմ, որ այս շաբաթուայ ընթացքում կոալիցիոն գործընկերները կը քննարկեն, թէ ինչպէս են պատրաստուում գործադրել այս բանաձեւը, ինչպիսի մեխանիզմներ պէտք է ստեղծուեն, որպէսզի այս բանաձեւը արդիւնաւէտօրէն կատարուի»:

Մարտի 1-ի իրադարձութիւնների անկախ հետաքննութիւնն իրականացնելիք մարմինը, ըստ հանրապետական պատգամաւորի, նպատակաշարժար է ստեղծել Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակին կից:

ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԻՕՍՈՒԹԵԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:
Հայաստանի քաղաքագէտների միութիւնն իշխանութիւններին կոչ է արել նախաձեռնել երկխօսութիւն ընդդիմութեան հետ: Այդ մասին այսօր «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրել է միութեան ղեկավար Հմայեակ Յովհաննիսեանը:

«Մենք առաջարկում ենք արդիւնաւէտ եւ ազգօգուտ քաղաքական երկխօսութիւն», - ասուած է միութեան վարչութեան յայտարարութեան մէջ: - «Ռոբերտ Քոչարեանի պաշտօնավարութիւնից յետոյ Սերժ Սարգսեանը պէտք է փորձի սահմանազատուել նախկին նախագահի տասնամեայ կառավարման մեթոտներից: Դրա հա-

մար անհրաժեշտ է անյապաղ ազատել բոլոր քաղբանտարկեալներին, իրականացնել Մարտի 1-2-ի ողբերգական իրադարձութիւնների անկախ միջազգային հետաքննութիւն, ապահովել էլեկտրոնային լրատուամիջոցների կողմից բոլոր՝ նաեւ ընդդիմադիր տեսակետների եւ դիրքորոշումների լուսաբանում, ինչպէս նաեւ շուտափոյթ վերականգնել երկրում հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու սահմանադրական իրաւունքից օգտուելու կարգը»:

Քաղաքագէտները նաեւ պատրաստակամութիւն են յայտնում իրենց «մասնագիտական կարողութիւններով նպաստել երկխօսութեան ծաւալմանը»:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ԴԻՍՈՒՄ Է ԴԱՏԱԽԱԶԻՆ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈԽԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:
Հայաստանի Ազգային ժողովի «Ժառանգութիւն» իմբակցութիւնն ստորագրահաւաք է նախաձեռնել գլխաւոր դատախազ Ադուան Յովսէփեանին հասցեագրուած դիմումի տակ, որով խնդրում է յետընտրական զարգացումների աւնջութեամբ կալանաւորուած պատգամաւորների խափանման միջոցը փոխարինել գրաւով: Մարտի 1-ի իրադարձութիւն-

ներից յետոյ խորհրդարանը իր համաձայնութիւնն էր տուել պատգամաւորներ Սասուն Միքայէլեանի, Յակոբ Յակոբեանի, Միսանիկ Մալխասեանի եւ Խաչատուր Սուքիասեանի նկատմամբ քրէական գործեր յարուցելու համար:

Խաչատուր Սուքիասեանը թաքնուած է քննչական մարմիններից, մնացած երեք պատգամաւորները կալանաւորուած են:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐԵԱՆ. «ԶԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՌԿԱՅ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ԹՕԹԱՓԵԼ ԵՐԿԻՕՍՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ»

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան խորհրդարանական իմբակցութեան քարտուղար Արամ Սաֆարեանի համոզմամբ, երկփեղկուած հասարակութեան մէջ առկայ տեղութիւնը հարկաւոր է թօթափել երկխօսութեան միջոցով:

«Խօսքը երկու տեսակի երկխօսութիւնների մասին է», - Երկուշաբթի Ապրիլ 21-ին հրաւիրած ասուլիսում ասաց պատգամաւորը: - «Առաջին վերաբերում է խորհրդարանի ներսում խորհրդարանական ընդդիմութեան՝ «Ժառանգութիւն» կուսակցութեան հետ երկխօսութեանը: Երկրորդը արտախորհրդարանական ուժերի հետ երկխօսութիւնն է, եւ այդ երկխօսութիւնը պէտք է մի հիմքի վրայ տեղի ունենայ, որ արտախորհրդարանական ընդդիմութիւնը, արմատական ընդդիմութիւնը ընդունի ընտրութիւնների արդիւնքները, ինչը արմատական ընդդիմութեանը հնարաւորութիւն կը տայ աւելի լայն մասնակցութիւն ունենալ Հայաստանի քաղաքական կեանքին»:

MASSIS POST
Multilingual Blog For Armenian Issues
Updated Daily
<http://www.massisweekly.com/massispost.html>

ԼՈՒՐԵՐ

ԵՆԽԿ-Ն ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԶԵԿՈՅՑԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽԿ) լիազուգումար նիստում Ապրիլ 17-ին քուէարկութեամբ ընդունուեց «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների վիճակի վերաբերեալ» գեկոյցը՝ 93 կողմ, 8-ական դէմ եւ ձեռնպահ ձայներով:

Թէեւ Հայաստանեան պատուիրակութիւնը 36 փոփոխութիւնների առաջարկներ էր ներկայացրել, բանաձեւի ընդհանուր բովանդակութիւնը չփոխուեց:

Համաձայն ընդունուած բանաձեւի, «հրատապօրէն անհրաժեշտ բարեփոխումներով առաջարկուելու հնարաւորութիւն տուող միակ ուղին քաղաքական ուժերի միջեւ բաց եւ կառուցողական երկխօսութիւնն է»:

Խորհրդարանականները նշել են մի շարք պայմաններ երկխօսութիւնը սկսելու համար: Մասնաւորապէս՝ անյապաղ սկսել մարտի 1-ի իրադարձութիւնների (որոնց գոհ են գնացել 10 եւ վիճարկուել 200 հոգի) վերաբերեալ անկախ հետաքննութիւն, անյապաղ ազատ արձակել առերեւոյթ արհեստական եւ քաղաքական շարժառիթներով կալանաւորուած անձանց եւ անյա-

պաղ վերացնել եւ ուժը կորցրած համարել «Ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքում Ազգային ժողովի կողմից վերջերս ընդունուած փոփոխութիւնները:

Եթէ այս պայմանները չպահանջուեն եւ վերոնշեալ բարեփոխումների վերաբերեալ բաց երկխօսութիւն չըջօրէն չծաւալուի «Հայաստանի վստահելիութիւնը որպէս Եւրոպայի խորհրդի անդամ կասկածի տակ կը յայտնուի»:

«Վեհաժողովը, հետեւաբար, պէտք է 2008 թուականի յունիսեան նստաշրջանի բացման ժամանակ դիտարկի վեհաժողովում Հայաստանի պատուիրակութեան քուէարկելու իրաւունքները կասեցնելու հնարաւորութիւնը, եթէ մինչ այդ վերոնշեալ պահանջների ուղղութեամբ ձեռք բերուած չլինի զգալի առաջընթաց», - եզրափակում է բանաձեւը:

ԵՆԽԿ-ում Հայաստանեան պատուիրակութեան ղեկավար Դաւիթ Յարութիւնեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «ողջամիտ» որակեց բանաձեւը եւ ասաց, որ այն պէտք է անմիջապէս դառնայ գործողութեան ծրագիր Հայաստանի համար:

ԱԼԻ ԲԱԲԱԶԱՆ. «ԹՈՒՐԲԻԱՆ ՊԱՏՐԱՍ Է ԱՇԽԱՏԵԼ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՏ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈ»: Թուրքիան ձգտում է երկխօսութիւն հաստատել Հայաստանի նոր իշխանութիւնների հետ՝ երկու երկրների յարաբերութիւնները բարելաւելու ուղղութեամբ:

«Ես նամակ եմ ուղարկել Հայաստանի իմ նոր գործընկերոջը՝ ասելով, որ Թուրքիան պատրաստ է երկխօսութիւն սկսել՝ նոր դարաշրջանում հայ-թուրքական յարաբերութիւնները բարելաւելու ուղղութեամբ», - «Ասոսիէյթըտ Փրէս» գործակալութեան փոխանցմամբ, այսօր ասել է Թուրքիայի արտաքին գերատեսչութեան ղեկավարը:

«Յայտնի է, որ մենք ունենք խնդիրներ, որոնցից մի քանիսը հարիւր տարուայ վաղեմութիւն ունեն», - նշել է Ալի Բաբաջանը եւ լաւելել. - «Սակայն այդ խնդիրները հնարաւոր է չաղթահարել միայն երկխօսութեան ճանապարհով: Մեր դուները բաց են երկխօսութեան

համար»:

Հայաստանի նորանշանակ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանին հասցէագրուած Բաբաջանի շնորհաւորական ուղերձում, մասնաւորապէս ասուած է. - «Ես անկեղծօրէն հաւատում եմ, որ մենք միասին կը կարողանանք օգտուել նոր քաղաքական իրողութիւնների ընձեռած հնարաւորութիւններից՝ սկսելու իմաստալից եւ նպատակաւորուած երկխօսութիւն՝ համեմատ աջ արդիւնքին, որին մենք ձգտում ենք»:

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ չկան: Հայաստանի ղեկավարները բազմիցս են յայտարարել, թէ պատրաստ են նման յարաբերութիւններ հաստատել առանց նախապայմանների:

Երկու երկրների արտգործնախարարութիւնների միջեւ չփոխանակուած են եղել նախարարների եւ այլ պաշտօնեաների մակարդակով:

ԾԵԾԿՈՏՈՒՔ ԶԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԶԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՒ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարում հայերի եւ յոյների միջեւ ծեծկռտուք է տեղի ունեցել: Ծաղկազարդի սօնակատարութեան ժամանակ հայ հոգեւորականը վրդովուած դուրս է քաշել յոյն հոգեւորականին, ով, նրա կարծիքով, սահմանուածից երկար էր մնացել Տիրոջ գերեզմանի մօտ: Այնուհետեւ սկսուել է ծեծկռտուք՝ արդեն հաւատացեալների մասնակցութեամբ, որին, ի վերջոյ, միջամտել է ոստիկանութիւնը:



Երուսաղէմի մէջ ծեծկռտուք հայ եւ յոյն հոգեւորականի միջեւ

Յոյն ուղղափառ եւ Հռոմի կաթոլիկ եկեղեցիները տնօրինում են Սուրբ Յարութեան տաճարի տարբեր հատմաններ, ինչի հետեւանքով յաճախ վէճեր են ծագում երեք եկեղեցիների դաւանորդների միջեւ:

Նշենք, որ Հայ առաքելական, Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարում հայերի եւ յոյների միջեւ ծեծկռտուք է տեղի ունեցել: Ծաղկազարդի սօնակատարութեան ժամանակ հայ հոգեւորականը վրդովուած դուրս է քաշել յոյն հոգեւորականին, ով, նրա կարծիքով, սահմանուածից երկար էր մնացել Տիրոջ գերեզմանի մօտ: Այնուհետեւ սկսուել է ծեծկռտուք՝ արդեն հաւատացեալների մասնակցութեամբ, որին, ի վերջոյ, միջամտել է ոստիկանութիւնը:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ՇԻՐԻՄԻՆ



Կարէն Դեմիրճեանի յուշափարիմ ծաղիկ դնելէ ետք, Լեւոն Տէր-Պետրոսեան շրջապատուած մերկաներու կողմէ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Ապրիլի 17-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան այցելեց Կոմիտասի անուան պանթէոն, որտեղ ամփոփուած է Կարէն Դեմիրճեանի աճիւնը: Կարէն Դեմիրճեանն այսօր կը դառնար 76 տարեկան: Լեւոն Տէր-Պետրոսեանը ծաղիկներ դրեց Կարէն Դեմիրճեանի յուշաքարին եւ իր ցաւակցութիւնը յայտնեց Դեմիրճեանների ընտանքին:

Կարէն Դեմիրճեանին յուշաքարին ծաղիկներ դնելու համար բազմաթիւ քաղաքացիներ էին եկել պանթէոն, որոնք տեսնելով Տէր-Պետրոսեանին՝ շուրջը հաւաքուեցին: Նրանցից շատերը մօտենում էին Տէր-Պետրոսեանին եւ խնդրում չղաղարեցնել պաշարը: «Մենք համոզուած ենք, Տէր-Պետրոսեանը կը շարունակի Կարէն Դեմիրճեանի

սկսած գործը: Պատահական չէ, որ նա այսօր այստեղ է՝ մեր կողքին: Միայն նա կարող է երկրում վերականգնել արդարութիւնն եւ մեզ ազատել այս բռնապետերից», - ասաց Ռիմա Ղազարեանը:

Կարէն Դեմիրճեանի յիշատակից նրա յուշաքարին ծաղիկներ դնելուց չետոյ ներկաները շրջապատեցին Լեւոն Տէր-Պետրոսեանին եւ ուղեկցեցին մինչեւ մեքենայ՝ «Լեւոն նախագահ», «Պաշար, պաշար մինչեւ վերջ» վանկար-կումներով: «Ինչ է, կարող է սա էլ միտախոս համարեն Բոչարեանն ու Սերժը, որոնք այսօր չեն համարձակուում մօտենալ Կարէն Դեմիրճեանի շիրիմին», - տեսա-խցիկը տեսնելով զայրացած ասաց մի կին եւ աւելացրեց. «Նկարէք, նկարէք, թող տեսնեն, թէ ում է ընտրել ժողովուրդը»:

ԶԱՆԴԻՊՈՒՄ ԶՈՌՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ ԶԵՏ

Հռոմի Սրբազան Պապ Պենետիկոս Ժ. հովուապետական այցելութեամբ կը գտնուի Միացեալ Նահանգաց մէջ: Նախ այցելեց Ուաշինկթըն Տի Մի եւ հանդիպում ունեցաւ ԱՄՆի նախագահ ձորճ Պուշի հետ, որ հանսիպութեամբ մը տօնեց Սրբազան Պապի ծննդեան 81-րդ տարեդարձը:



Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան եւ Պապ Պենետիկոս Ժ.:

Որպէս Կաթոլիկ եկեղեցւոյ Սրբազան Պապ ընտրութենէն ետք, 2005 թուականին, Պենետիկոս Ժ. ի առաջին այցելութիւնն է Միացեալ Նահանգները:

Ուաշինկթընէն Տի Մի-էն ետք, Սրբազան Պապը այցելեց Նիւ Եորք, ուր Ուրբաթ Ապրիլ 18, երեկոյեան ժամը 6:00-ին Սէնյթ ձողէֆ Եկեղեցւոյ մէջ նախագահեց միջ-եկեղեցական աղօթքի արարողութեան, որուն բնաբանն էր «Յիսուս՝ մեր յոյսը միութեան»: Միջ-եկեղեցական այս արարողութեան հրահրուած էին նաեւ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան, Թեմական Պատուիրակ Գերշ. Ս. Վիգէն Արք. Այգազեան եւ Ս. Վարդան Մայր Տաճարի Լուսարարապետ Արժ. Ս. Մարտիրոս Բհնջ Չեւեան: Աղօթքի արարողութենէն ետք տասնըմէկ հոգեւոր պետեր առանձին հանդիպում ունեցան Սրբազան Պապին հետ: Հոգեւորականներ

րու այս խումբին մաս կը կազմէին Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան՝ որպէս նախագահը Ամերիկայի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Համաժողովին եւ Թեմական Պատուիրակ Գերշ. Ս. Վիգէն Արք. Այգազեան՝ որպէս նախագահը Ամերիկայի Եկեղեցիներու Ազգային Խորհուրդին:

Այս հանդիպման ընթացքին՝ Առաջնորդ Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան, որ նախապէս երեք առիթներով Հռոմի մէջ տեսակցած էր Սրբազան Պապին հետ, Անոր փոխանցեց Ամենայն Հայոց Կաթոլիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եղվայրական ողջոյնները եւ Ամերիկայի Արեւելեան Թեմի Հայ հաւատացեալներու վարի գալստեան մաղթանքները:

ԱՊՐԻԼ 24

ԱՊՐԻԼԵԱՆ ԶՕՐԱԿՈՂ

ՄԱՀԱԿ ԹՈՒԹՃՆԱՆ

Ուրույն գործընթացի կը հետևելի ժողովուրդի մը գիտակցութեան զարթոնքը: Ուղղագիր չէ ատոր անցած պատմական ուղին, այլ ենթակայ է աջ ու ձախ թեքումներու, ետ-դարձերու, ընկրկումներու, ինչպէս նաեւ հերոսական խոյանքներու:


Հայ ժողովուրդը եւս, իր ծանրաբայլ ու ցաւոտ յառաջխաղացքին մէջ, անդուլ պայքար մղած է՝ գինք շահագործող օտար բռնակալներու եւ տեղական հարստահարիչներու դէմ: Որքան ծանր եղած է գինք կեղեքող ներքին ու արտաքին տիրապետութիւններու լուծը, այնքան դժուար եղած է իր ազատագրական պայքարը եւ ձեռք բերող արդիւնքը: Իրեն պարտադրուած զրկանքներուն հակազդող հաւաքական գիտակցութեան յարատեւ աճը, սակայն, միշտ ալ խթանած է ժողովրդական զանգուածներու ազատագրական պայքարները, աւելի արդար իրաւակարգերու հաստատման ի խնդիր եղած ըմբոստութիւնները:

Պատմական Հայաստանի աշխարհաքաղաքական աննպաստ դիրքը տարածաշրջանին մէջ, առաւել երկրի լեռնային տարանջատուածութիւնը, հաւանաբար, մեծապէս խոչընդոտեցին մեր ժողովուրդի հաւաքական գիտակցութեան բնականոն զարգացումը: Նոյնպէս խափանուեցաւ միացեալ հզօր պետականութեան աստիճանական կազմաւորումը: Մեր յարգելի պատմաբանները վերաւորական թող չգտնեն այստեղ ազգային նշուած սա անվիճելի իրողութիւնը – մեր պատմութեան անցած տարիներու մեծագոյն մասը մեր նախահայրերը տառապած են օտար տիրապետութեան տակ՝ օտար բռնակալներու եւ անոնց հայազգի միջնորդներու ծառայութեան մէջ: Թող չառարկուի, խնդրեմ, թէ այդպիսի «պարտուողական» հաստատումը ատակ է բարոյագրկելու մեր զանգուածները, եւ թէ նախընտրելի է թեթեւ հպումներով քչիկ մը չաւելեալ փայլ տալ մեր բաւական գորշ պատմութեան: Կը կարծեմ թէ երկու հազարամեակներէ աւելի երկարող առասպելներով ու հեքիաթներով սնած մեր ժողովուրդը այժմ բաւական չափահաս է եւ պատրաստ՝ լսելու ճշմարտութիւնը իր ամբողջութեամբ:

Վախը, անյուսութիւնը, անկազմակերպ քաշքշուկը կը յատկանշեն ամբողջը՝ հաւաքական գիտակցութեան դեռ չհասած բնակչութիւնը: Բայց երբ յաղթահարէ ամբոխային իր շփոթը, երբ նուաճէ իր հաւաքական գիտակցութիւնը որպէս մարդկային հասարակութեան լիարժէք անդամ, ա՛յն ատեն է որ խեղճուկ ու միայնակ մարդեր մէկտեղող բազմութիւնը կը դառնայ քաղաքացիական հասարակութիւն: Այսինքն՝ ժողովուրդը կը կենսագործէ իր գիտակցութեան զարթոնքը: Կ'արթննայ: Ու գիտակցի ինքնավստահութեամբ, անտեղիտալի կամքով ու համակարգուած միասնակիանութեամբ կը պահանջէ իր արդար տեղը՝ արդար արեւին տակ: Կը գիտակցի, վերջապէս, թէ Հայաստան աշխարհը կը պատկանի

իրեն եւ իր համաքաղաքացիներուն, թոռներուն, ծոռներուն – եւ ոչ թէ քմահաճ եւ անխնայ ստորութեամբ գինք կեղեքող, սպաննող ու բանտարկող Քոչարեաններուն ու Սերժ Սարգսեաններուն կամ անոնց շփացած կիներուն ու գաւակներուն ու մերձաւորներուն որոնք «թագադրական» տօնահանդէսով արբեցած են՝ երկու քայլ անդին իրենց խաչեցեալ հարազատներու հոգիներուն համար հաւաք ու մոմավառութիւն կատարող սգակիր կիներու անամոքելի ցաւին անհաղորդ. կամ անոնց սպասարկող քառասուն հարստապետերու պարտացած ընտանիքներուն:

Իսկ արթնցած այս ժողովուրդը ոչ միայն կը պահանջէ, այլ արթուն կը հսկէ իր իրա-



Ազատի Բաղաձայնի բանտարկեալները

ւունքներու պահանջի գործադրութեան բոլոր հանգրուաններուն: Եւ իր գիտակցի հսկողութիւնը այնուհետեւ թուրութիւն կամ քուն չի ճանչնար այլեւս:

Մէկուկէս միլիոն անմեղ գոհեր տուած այս ժողովուրդն է որ գրեթէ մէկ դար առաջ մեծ դժուարութեամբ արթնցաւ իր բազմադարեան թմբիրէն: Զինք ոչնչացնել ուխտած ոստիսին դէմ գերմարդկային ճիգով ոտքի կանգնեցաւ դարձեալ: Հերոսական մարտնչուժով նուաճեց Սարտարապատի համազգային փայլուն յաղթանակը: Աւելի ուշ, արծուասիրտ ազատամարտիկներու անբասիր արիւնով գրեց արցախեան փառապանծ դիւցազներգութիւնը:

Անկախութեան առաջին օրէն սկսեալ, սակայն, սուտ օրօրներով դարձեալ քնացուցին հայ ժողովուրդի գիտակցութիւնը: Խաբեցին գինք: Ըսին թէ իրեն պէտք չեն սովետական եօթանասուն դժնդակ տարիներուն ի՛ր իսկ ձեռքերով ստեղծուած հաւաքական իրագործումները եւ երկրին բնական հարստութիւնները, կայուածներն ու բարիքները: Նորելուկ ազահ հարստապետերու ճամբրտակութեամբ իրմէ յափշտակեցին, թալանեցին եւ նորաստեղծ աւազակապետութեան քառասուն ինքնամենաշնորհեալ ընտանիքներուն միջեւ բաժնուեցան ժողովուրդին պատկանող Հայաստան աշխարհը իր բոլոր բարիքներով:

Եւ անկախութեան օրօրներով քնացած ժողովուրդը չանդարազարձաւ իսկ թէ ինչպէ՛ս կո-

ղպտեցին գինք՝ իրեն բաժին ձգելով գրկանքն ու հարստապետական նորատիպ ստրկութիւնը միայն, որ շուտով դարձաւ քառասուն մենաշնորհեալ աւազակներու բռնապետական համակարգը՝ Քոչարեան-Սերժ Սարգսեան երկգլխանի աւազակապետերու եւ իրենց խամաճիկներու գլխաւորութեամբ:

Ահաւոր բան էր տեսնել վերջին տասը տարիներու Հայաստանը որուն երկինքը ծածկուած էր սեւ ամպերով՝ «Յուսալը արգիլուած է» վերտառութեամբ: Ճիշդ է, «Յոյսը վերջինն է մեռնում»: Սակայն իմ նորանկախ հայրենիքիս մէջ ես մեծ դժուարութեամբ ու գերմարդկային ճիգով միայն նշմարեցի հազիւ պլպլացող Յոյսը որ մարելու շատ մօտ էր ամէն ըրպէ: Եւ ամէն հայրենիք այցելութեանս աւելի դժուար կ'ըլլար նշմարել գայն:

մեթոտները՝ ընդդիմադիր մօտ 150 քաղաքական բանտարկեալներով: Իշխանութիւնը բռնի ուժով իրենց ձեռքերուն մէջ պահելու նպատակով, Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան բացէ ի բաց որդեգրեցին թուրք դահիճներուն աշխատակերպը: Մինչեւ այսօր դեռ հայաստանեան բանտերու մէջ արգեյափակուած քաղաքական գործիչները՝ ազգային ժողովի պատգամաւորները, բանակայինները, ազատամարտիկները եւ գործօն քաղաքացիները հոն կը գտնուին՝ բեմադրուած սադրանքներու, անհիմն գրպարտութիւններու, կամայական շինծու ամբաստանութիւններու հիման վրայ – ոմանք նոյնիսկ առանց որոշակի մեղադրանքի, այլ պարզապէս անհեթեթ «կասկածներու» պատրուակով:

Իսկ բուն ոճրագործները եւ քրէական յանցագործները դուրսն են ու կը վայելեն իրենց ուրոյն «ազատ եւ անկախ» կարգավիճակը:

Այս օրերուն, երբ սպառնալիքներու կրակ կը ժայթքէ մեր թշնամի հարեւաններու բերաններէն, ի՞նչ տրամաբանութեամբ ազատագրուած կը մնան մեր երկրի ամենէն հաւատարիմ եւ անձնագոհ պաշտպանները: Հայաստանի Հանրապետութեան ինքնակոչ նախագահ Սերժ Սարգսեան իմաստութեան ու հեռատեսութեան ի՞նչ ծուռ պատճառաբանութիւններով կալանքի տակ կը պահէ զանոնք՝ բացի իր բռնագաւթած աթոռին վրայ քիչ մը եւս բազմած մնալու հիւանդագին մտասեւեռումէն: Իսկ հապա՞ թէ վաղն առաւօտ թշնամին ներխուժէ Արցախի սահմանները: Ո՞վ պիտի պաշտպանէ Արցախը – եւ ամբողջ Հայաստանը – նման իրական կարելիութեան մը շղթայագրեման պարագային: Անշուշտ ատիկա պիտի կատարեն դարձեալ հայ ազատամարտիկները – որոնց մէկ մասը բանտերու մէջ կը գտնուի ներկայիս – մինչ քոչարեաններն ու սերժ-սարգսեանները երկրէն ընդմիշտ դուրս պիտի պրծին՝ իրենց թալանած միլիոններով:

Թուրք դահիճները գլխատեցին հայ ժողովուրդը եւ զայն գրկեցին իր ուղեղէն՝ գինք կոտորելու նախօրեակին: Դատելով մինչեւ այսօր իրենց ցուցաբերած վերաբերմունքէն, ո՛չ մէկ երաշխիք նշմարելի է որ մեզ յուսադրէ թէ նոյն կամ ատոր նման խելագար արարքի մը պիտի չդիմեն մերօրեայ հայաստան նորագոյն դահիճները, որոնք կը յամառին կալանքի տակ պահել հայրենի ժողովուրդի լուսագոյն ներկայացուցիչները:

Աշխարհի բոլոր ողջմիտ հայերու թիւ մէկ պարտականութիւնն է մեր հայրենի քաղաքապետութեանը ազատ արձակումը: Ներկայ պահու այս գերագոյն հրամայականի անյապաղ իրագործման համար զօրակցութեան կոչ կ'ընենք հայրենիքի եւ սփիւռքի տարածքին հայ անունը կրող բոլոր պարկեշտ հոգիներուն անխոր:

Գիտակցի ոստումով արթնցած է Հայաստանի ժողովուրդը եւ իր բախտը առած՝ իր ձեռքերուն մէջ: Այսուհետեւ իր երթուղին կրնայ խորտուբորտ ըլլալ ու խիստ վտանգաւոր, կամ՝ յարաբերաբար աւելի հեզասահ ու խաղաղ: Բայց ան վճռական է եւ անպայման պիտի հասնի իր նպատակակէտին՝ որ ժողովուրդին համար իր գոյաւման ձգտող ժողովրդավար հարազատ իրաւակարգի հաստատումն է: Բարի՛ երթ իրեն:

ԱՊՐԻԼ 24

ԱՊԱԳԱՅԻ ԲԵՈՒՆԿԱՐՈՎ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ

Ապրիլ է կրկին, բնութեան զարնանային զեղեցիկ ամիսը, երբ ձմեռը արդեն անցեալ է, իսկ երբ կը սկսկին ծաղկել եւ հանդերձաւորուիլ այդ բոլորին տեսքը կազմող ծառերն ու ծաղիկները: Այդ բոլորին սակայն կը հակադրուի հայուն ներաշխարհը, արթնացումովը չիշատակներու որոնք խոր արմատներ նետած են հայու ենթագիտակցութեան մէջ: Գէշ երազի մը պէս, հայը ինքզինք կը գտնէ երեւոյթներու առջեւ, որոնք անաւասիկ 3-4 սերունդներու ընդմէջէն, տակաւին կը նմանին կոտորացող վէրքերու, վէրքեր որոնք կը սպասեն իրենց բուժման եւ սպիացման:

Ինչպէ՞ս հասկնեն թուրքիոյ կառավարութեան որ հայ ժողովուրդի վրայ գործադրուող ցեղասպանութեան փորձը պիտի շարունակէ թունաւորել, ոչ միայն հայ եւ թուրք ժողովուրդներու փոխ-յարաբերութեան միջոցովը, գայն պահելով ուրացման եւ դրժումի քաղաքականութեան մը շունչին տակ, այլ, պիտի նշանակէ որ թուրքիոյ շահերը, յատկապէս միջազգային գետնի վրայ, պիտի մնան անտեսուած պարզ այդ ուրացման պատճառաւ:

Թուրքիոյ Եւրոպական Միութեան ներս մուտքը պիտի մնայ անկարելի կամ մերժուած, այնքան ատեն որ թուրքիոյ կողմէ կը շարունակուի իր ներկայ կեցուածքը, գրեթէ դար մը առաջ գործադրուած ոճիրին նկատմամբ: Որքան ալ ուշացումով, Հայկական Յեղասպանութեան ճանաչումը պիտի ճանչցուի աշխարհի երկիրներու կողմէ, երթալով աւելցնելու արդէն իսկ ճանչցողներու թիւը: Ֆրանսայի օրինակը բաւականին ուսանելի է թուրքիոյ համար: Ֆրանսայի Ազգային ժողովի քուէն, Յեղասպանութեան ուրացման քրէական յանցանք նկատուելուն, եւ Ֆրանսայի քաղաքագէտներու պահանջները Յեղասպանութեան ճանաչումը, թուրքիոյ Եւրոպական Միութեան ներս մուտքին: Ինչ կը վերաբերի թուրքիոյ վստահութեան Ամերիկայի նեցուկին, այս եւս ժամանակաւոր եւ պարագայական հանգամանք ունի: Պուշի իշխանութեան պատմութեան անցնելով, Հայոց Յեղասպանութեան ճանաչումը Ամերիկայի կողմէ, պարզապէս ժամանակի հարց է, եւ ոչ թէ մերժումի: Այս օրերուն Ուաշինգթոնի մօտ թուրքիոյ բարեկամներու թիւը պարզապէս սահմանուած է պետական աւագանիով: Յստակ չէ նաեւ թէ, եթէ երկար շարունակուի թուրքիոյ մուտքի արգիլումը Եւրոպական Միութեան ներս, թուրք բանակը կրնայ երկրի ղեկավարութիւնը ձեռք առնել, այդպէս ասած պահպանելու եւ փրկելու համար Քեմալ Աթաթուրքի աշխարհիկ պետութեան մը գոյատեւումը: Թուրքիոյ յստակ արեւմտեան ժողովրդավարութեան մը հակումը պայմանաւորուած է անոր ներկայ քաղաքագէտներու ճշգրիտ արեւելումով, որուն մաս կը կազմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը: Ֆրանսական Խորհրդարանի, եւ Հայոց Յեղասպանութեան հետքերով, տակաւին կայ Օրհան Փամուքի եւ իր նմաններու հայանպաստ դիրքորոշումը, որ Փամու-

քի պարագային, նոյնիսկ արժանացաւ Նոպէլեան Մրցանակի: «Թուրք ինքնութեան» ժխտումի պատրուակով, թուրք մտաւորականներ քաղաքական հետապնդումի, նոյնիսկ աքսորի ենթարկուեցան: Տեղի ունեցաւ նաեւ Հրանդ Տինքի սպանութիւնը: Թուրք կառավարութեան այս կեցուածքը արժանացաւ միջազգային քննադատութեան: Նաեւ լսուեցան ձայներ թուրքիոյ մէջ գտնուող շուրջ 70,000 հայերը Հայաստան վերադարձնելու մասին:

Դրժումի եւ մերժումի այս ընդհանուր միջոցառումն մէջ, հայ-թուրք երկխօսութիւնը կը մնայ գրեթէ անկարելի, եւ հայ-թուրք

ժողովուրդի հաւաքական զարգացումն է քաղաքական հասունացման եւ գիտակից պահանջատիրութեան հարցերու վերաբերեալ: Յատկապէս այս նշմարելի է երիտասարդութեան մօտ, որ, որոշ չափով ձեռքբերուած յետ-եղեռնեան առաջին եւ երկրորդ սերունդներու զգացական հոգեվիճակէն, քաղաքական մեր խնդիրներուն կը մօտենայ առարկայութեամբ եւ սառնասրտութեամբ, մանաւանդ իրենց ապրած երկիրներու քաղաքական միջոցառումի ծանօթութեամբ: Երկրորդ ազդակը կը վերաբերի միջազգային կացութեան, յատկապէս Ամերիկայի եւ թուրքիոյ մէջ ուրուագծուող դրական երեւոյթներու լոյսին տակ: Ամերիկայի պարագային, ըսուեցաւ արդէն որ, ուշ կամ կանուխ, այս երկիրը, բազմաթիւ

թիւն: Ինչ կը վերաբերի թուրքիոյ, դարձեալ հոս եւս, ուշ կամ կանուխ, քաղաքական կեանքի հոլովոյթը այս երկիրը պիտի առաջնորդէ դէպի աւելի իրատես, աւելի ընդունակ իր տարածքի մէջ ապրող փոքրամասնութեանց քաղաքական իրաւունքներուն եւ անոնց գոհացման: Այս պիտի իրականանայ թուրքիայէն ներս ստեղծուած աջակիցի հասարակարգով մը, զոր կարելի պիտի ըլլայ նկարագրել իբրեւ «քաղաքակիրթ ընկերութիւն» (civil society), այնպէս ինչպէս կ'ըմբռնէր ողբացեալ Հրանդ Տինք, եւ սակայն զոհ գնաց այդ մտածողութեան, անոր կանխահաս ըլլալուն: Օրհան Փամուքները, Քեմալ Եալչընները, Թանուր Ազաւները, եւ իրենց նման մտածողները ի վերջոյ պիտի յաջողին թուրքիայէն ներս ստեղծել նոր մտածողութիւն մը, որ, ոչ միայն չեղեալ նկատէ թրքական 301 օրինագիծը, «թրքութեան էութեան» սահմանումի տեսակէտէն, այլ անդրադառնայ որ իր տարածքին մէջ, որ թուրքիա կը ճանչցուի, փոքրամասնութիւններ կան որոնք անիրաւուած են, չիշլու համար միայն հայերն ու քիւրտերը, այլ նաեւ իրաւունքներու որոնք միջազգային գետնի վրայ, պիտի պարտադրուի թուրք կառավարութեան: Այս իմաստով, նման եղափոխութիւն մը կրնայ թուրքիոյ մէջ տեղի ունենալ, երբ այս երկիրը մտնէ Եւրոպական Միութեան ծիրէն ներս:

Այս կարելիութիւնները հորիզոնի վրայ ուրուագծուած կը տեսնուին նկատի առած այժմու համաշխարհային խառնակ վիճակը որը, ուշ կամ կանուխ, կրնայ խաղաղիլ նոր աշխարհագրական տարածքներու առկայութեամբ:

Հիմնական հարցը մեզի, հայերու համար, այն է թէ, իբրեւ ժողովուրդ եւ պետութիւն, մենք որքա՞ն պատրաստ պիտի ըլլանք ստեղծուելիք առիթներէն օգտուելու, որուն համար ալ պարտաւոր ենք մշակելու անհրաժեշտ գիտակցութիւնն ու պատրաստութիւնը...



տնտեսական կապերը կը մնան փակուղիի մը մէջ: Ոչ միայն այս, թուրքիոյ պետական նեցուկին ատրպէյճանական «կարծր» դիրքորոշման դարաբաղեան հարցի լուծման ճամբուն, ամբողջ կովկասեան շրջանը կը դատապարտէ քաղաքական անորոշութեան եւ ձգտուածութեան:

Չարմանալի կը թուի թէ թուրքիոյ պետական ղեկավարները ինչո՞ւ չեն անդրադառնար այս բոլոր աննպաստ երեւոյթներուն, որոնք կը վնասեն իրենց սեփական շահերուն իսկ: Հայոց Յեղասպանութեան ճանաչումը կրնայ իրենց շահերուն իսկ լուծման հեռանկարներ ստեղծել, եւ այս ընելով, իրենք, թուրքերը նախ կը սրբագրեն պատմական մեծ մեղանշում մը կատարած ըլլալու յանցանքը, Գերմանիոյ օրինակով, եւ ապա ճակատաբաց կրնան ներկայանալ միջազգային ատեաններուն, իբրեւ արդարութեան եւ մարդկային իրաւունքներու նկատմամբ, յարգանք ունեցող պետականութիւն: Այս մէկը տարրական եւ հիմնական նախապայման մը կը հանդիսանայ, հայ-թուրք կապերու բնականացման, եւ անկէ բխող միջազգային գանազան դրական զարգացումներու: Պէտք է յուսալ որ Ապտալլա Կիւլըրը, եւ Ռեճեփ Թայյիպ էրտողանները, ուշ կամ կանուխ անդրադառնան այս իրողութեան...

Գալիք ժամանակաշրջանը կրնայ յատկանշուիլ դրական զարգացումներով, հայկական Յեղասպանութեան ճանաչման հարցին կապակցութեամբ մասնաւորաբար, իսկ հայ դատի վերաբերեալ ընդհանրապէս: Հիմնական երկու ազդակներ կարող են գործօն դեր ունենալ այս զարգացումներու ի նպաստ: Առաջին ազդակը հայ

այլ երկիրներու նման, պիտի ստիպուի ճանչնալ ցեղասպանութիւնը իր իսկական անունով եւ տարագրով, եւ դադրի 15ի դէպքերը նկարագրել իբրեւ «ցաւալի եւ դատապարտելի արարքներ»: Այս երկրէն ներս հայ ժողովուրդը բաւական լուրջ «լուսինկ» ձեռք ձգած է, եւ չաջորդական իշխանութիւնները պիտի անպայման ընդունին 1915-ի Եղեռնը իբրեւ հայ ժողովուրդի վրայ գործադրուած ցեղասպանու-

ANNUAL COMMEMORATIVE EVENTS SPONSORED BY THE CITY OF GLENDALE

WEEK OF REMEMBRANCE

BLOOD DRIVE Sunday, April 20, 2008 St. Mary's Armenian Apostolic Church 500 S. Central Ave., Glendale, CA 10:00 AM - 4:00 PM (818) 243-3444

ARMENIAN GENOCIDE Thursday, April 24, 2008 Doors will open at 5 pm and the event will begin at 6 pm.

ALEX THEATRE 216 North Brand Blvd. (Free Parking at Orange St. Garage)

Keynote Speaker: CARLA GARAPEDIAN Director and Producer of the documentary "Screamers"

Artistic Program Produced by ARTISTS FOR KIDS Performances By: GEGAM GRIGORIAN MIKAEL AVETSYAN CHAMBER ORCHESTRA JIVAN GASPARIAN JR.

Tickets are available now at the Alex Theatre Box Office

Request for reasonable accommodations must be received no later than April 21st.

Massis Weekly

Volume 28, No. 14

Saturday, APRIL 26, 2008

Council Of Europe Assembly Condemns Armenian Crackdown

STRASBOURG -- The Council of Europe Parliamentary Assembly (PACE) last Thursday condemned the Armenian authorities' post-election crackdown on the opposition and warned that failure to reverse it would put at risk Armenia's full membership in the Strasbourg-based organization.

In a resolution, the assembly demanded an "independent, transparent and credible inquiry" into the March 1 deadly clashes in Yerevan between security forces and opposition supporters and "the urgent release of the persons detained on seemingly artificial and politically motivated charges." It also said that the recently enacted legal amendments which effectively banned opposition rallies should be repealed "with immediate effect."

The resolution stressed that these measures are necessary conditions for a dialogue between the Armenian government and the opposition as well as far-reaching political reforms which it said need to be implemented in the country. It warned that failure to take them would mean that "the credibility of Armenia as a member of the Council of Europe is put into doubt."

"The Assembly should therefore consider the possibility of suspending the voting rights of the Armenian delegation to the Assembly at the opening of its June 2008 part-session, if no considerable progress has been made on these requirements by then," read the resolution.



The regime in Yerevan has faced similar calls from the Council of Europe's decision-making Committee of Ministers as well as the European Union and the United States. Nonetheless, their crackdown on the opposition led by former President Ter-Petrosian appears to have continued unabated in recent weeks.

"The Assembly condemns the arrest and continuing detention of scores of persons, including more than one hundred opposition supporters and three members of parliament, on what appear to be politically motivated charges," read the PACE resolution. "This constitutes a de facto crackdown on the opposition by the authorities."

Մինչ Կիրակի երեկոյան հիւսիսային քաղիֆորնիացիները հանգստանում էին իրենց սննդում, մի խումբ նուիրեալ կամուրներ գրադուած էին պատասխանելով ամբողջ աշխարհից տեղացող հեռուստագանգերին: Հայկական Ոսկրածուծի Նուիրատուների Ռեգիստրի կազմակերպած առաջին թելեթոնին հազարաւոր մարդիկ Ամերիկայի Միացեալ Նահանգներից, Քանատայից, Մերձաւոր Արեւելքից խոստացել էին աւելի քան 300,000 տուրը՝ Հայաստանում ցողունային բժիշկների փոխպատուաստման կենտրոն կառուցելու համար:

Այս թելեթոնը Ռեգիստրի «Եղիբ հրեշտակ, փրկել մի կեանք» արշաւի քայլերից մէկն է, որը նպատակ ունի հանգանակել \$850,000՝ կառուցելու համար մի կենտրոն, որը գործարկուելուց յետոյ բժիշկների ցողունային փոխպատուաստման միջոցով կեանք պիտի պարգեւէ՝ հասնելով արեան քաղցկեղով եւ արեան այլեւայլ հիւանդութիւններով տառապող շատ հիւանդների, եւ կենսական նշանակութիւն պիտի ունենայ այլ հիւանդութիւնների բուժման բնագաւառում, ինչպէս քաղցկեղի շատ տեսակներ, շաքարախտ եւ սրտային հիւանդութիւնները: Կովկասեան տարածաշրջանում կենտրոնը իր տեսակի մէջ միակն է լինելու:

«Հորիզոն», «Հայ Վիժըն», ATV, ISN եւ LA View հեռուստատեսային կայաններով եւ Ռեգիստրի կայքէջով պիւուող թելեթոնը դեկտեմբերում էր "Emmy" մրցանակակիր, բեմադրիչ Մարք Մարդոյեանը: Թելեթոնի հանդիսավարներն էին դոկտ. Էվելին Բարդասարեանը, Փօլ Չատրըճեանը, Արայիկ Ղազարեանը եւ Մանուկ Սէրայտարեանը: Յատկանշական կոչին արձագանգող Հրեշտակների թւում էին Ղազարեան ընտանիքը, որը նուիրատուութիւն կատարեց ի յիշատակ Ռեգիստրի խորհրդի հիմնադիր անդամներից Մարիանա Ղազարեանի, Օվըն եւ Դեւորիս ընտանիքները, Թիթիգեան ընտանիքը՝ ի յիշատակ Արլին Թիթիգեանի, Աթիկեան ընտանիքը, Տէր եւ Տիկին Ստեփան եւ Լինտա Վարդանեանները: Մի քանի առեւտրական հիմնարկներ եւ կազմակերպութիւններ յատկանշական նուիրատուութիւններ կատարեցին, ներառեալ՝ The American Development and Investment, ՀՕՄԻ 12 մասնաճիւղերը, Կլէնտէյլի Ս. Աստուածածին Հայ Առաքելական եկեղեցին, ՀՕՄԻ Սրբոց Նահատակաց «Աշխէն Փիլաճեան» մանկամտրը, Lakeside բժշկական խումբը, նախկին խորհրդարանական Քէյթ Ռիչմընը, հիւսիսային Իրանի Հայ Առաքելական թեմի գործադիր խորհուրդը եւ Ռեգիստրի երկարամեայ հովանաւոր Կլէնտէյլի «Մեմորիալ» հիւանդանոցը:

Ծրագրի գլխաւոր հովանաւորներից շատերը կենտրոնում կ'ունենան իրենց անունը կրող սենեակներ: Առաւել՝ \$250 նուիրաբերած հովնաւորները կը պատուուեն, ունենալով իրենց «Հրեշտակների պատը»: Թելեթոնը իր ամբողջութեան մէջ չէր կարող յաջողութեան հասնել, եթէ չլինէին ամբողջ աշխարհից հազարաւոր հովանաւորներ, որոնք նուիրեցին մինչեւ \$500: Երեւանից յատկապէս այս միջոցաւման ներկայ գտնուելու համար ժամանած էր Ռեգիստրի գործադիր տնօրէն դոկտ. Սեւակ Աւագեանը:

Աննախընթաց յաջող այս թելեթոնը կազմակերպութեանը հասցրեց մի կէտի, որից իր թիրախին հասնելու համար կը մնայ \$350,000: Ծրագրի համար սկզբնական \$200,000-ը եւ աւելին նուիրաբերել էին «Ինսի» հիմնադրամը, անհատ նուիրատուներ եւ Ռեգիստրի խորհրդի անդամ Քարոլայն Նաճարեանը: Ռեգիստրը յոյս ունի մնացեալ ֆինանսաւորումը ապահովել հետագայ 5 ամիսների ընթացքում: Դրամահաւաքը ամբողջացնելու բանալի քայլերից մէկը Շաբաթ, Յունիս 21-ին Լոս Անճելըսի Կրիֆիթ գրասպասում նախատեսուած 3-րդ տարեկան քայլարշաւն է:

Նրանք, ովքեր ցանկանում են «Լինել հրեշտակ, փրկել մի կեանք», աջակցելով ցողունային բժիշկների փոխպատուաստման կենտրոնի կառուցման, կարող են կապ հաստատել Ռեգիստրի նախագահ դոկտ. Ֆրիդա Ջորդընի հետ (323) 663-3609 հեռախօսահամարով: Կազմակերպութեան հասցէն է՝ 3111 Los Feliz Blvd., Suit 206, Los Angeles, California: Էլեկտրոնային հասցէն՝ abmdrla@sbcglobal.net, կայքէջը՝ www.admdr.am:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԱՌԱԲԵԼ ՄԵԿ ՅԱՂԹԱՆԱԿ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Ներկայ դարուս, ամէն բնագաւառէ ներս, ազգային թէ միջազգային, ուսումնական թէ հասարակական, ընդունուած եւ մեծ յաճախականութեամբ բանաւոր թէ գրաւոր կրկնուող արտայատու թիւններէն մէկն է «մարտահրաւէր»ը: Քաղիֆորնիոյ հայկական վարժարաններու ութերորդ կարգի հայ աշակերտին հրամցուած մարտահրաւէրներէն մէկն է «Արարատ» տան կողմէ կազմակերպուած հայոց պատմութեան հարց-պատասխանի մրցումը:

Սփիւռքի տարածքին, երբ օրըստօրէ ծաւալող այլասերման վտանգին հետ դէմ յանդիման կը գտնուինք, երբ անհասանջ՝ հայ դպրոցը, միութիւնն ու եկեղեցին լծուած են հայապահպանման եւ հայրենիքէն դուրս հայակերտումի՝ ազգային գիտակցութեամբ նոր սե-

մը 53 էջերով, նպատակակէտ ունենալով հայկական վարժարաններու ութերորդ դասարանի աշակերտաշակերտուհիները ձեւով մը իրագրել դարձնելու հայկականութեան, միաժամանակ հպարտութիւնները չեղու իրենց նախնիներու իրագործումներով:

Մարտ 13ին, Կիրակի յետմիջօրէին, մրցոյթի կազմակերպչները իններորդ անգամ ըլլալով ի մի բերած էին Քաղիֆորնիոյ հայկական 7 վարժարաններու ութերորդ դասարաններու ներկայացուցչները՝ իրենց ուսուցիչներով, տնօրէններով, ծնողներով եւ քաջալերող բարեկամներով: Ինչպէս միշտ, ճիշդ ժամուն՝ ժամը 2ին, աշակերտները նստեցան նշանակուած տեղերը: Տիկ. Արշակունի բացատրեց մրցումին պայմանները, որմէ ետք սկսան հարցադրումները, տեւեց 2 ժամ, միայն տասնհիգ վայրկեան ընդմիջումով: Տիկ. Արշակունի հարցուց



ըունդներ, վաղուան դրօշակակիրներ դաստիարակելու սուրբ գործին, որպէս լուծում, «Արարատ» տան կամաւորներու խումբ մը, ունեցած են գեղեցիկ հեռանկարը պատրաստելու հայոց պատմութեան, մշակոյթի, գրականութեան հարց-պատասխանի մրցոյթ մը: Յակոբ եւ Մարլին Արշակունիներու շնորհակալ աշխատութեամբ պատրաստուած է պատանիներու մատչելի սահմաններու մէջ, անգլերէն գիրք

59 հարցումներ՝ հայոց պատմութեան գրականութեան եւ մշակոյթի բնագաւառները ընդգրկող, որոնց բոլորին սպառիչ կերպով կը պատասխանէր, բացատրութիւնները կու տար գոհացնելով ներկաներուն հետաքրքրութիւնը:

Հայ Քոյրերու վարժարանը իններորդ տարին ըլլալով մեծ հետաքրքրութեամբ եւ լրջութեամբ

Շաբ.բ էջ 20

ՀԲԸՍ Արտաւազդ Թատերախումբը կը ներկայացնէ

ԿԱՏԱԿԻ ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Շապր Մի Սիրեր, Այրել Կայ Շապր Մի Այրեր, Սիրել Կայ»
կատարողութեամբ

ԳՐԻԳՈՐ ՄԱԹԱՄԵԱՆԻ

ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 3, 2008, ԺԱՄԸ 8:00-ԻՆ
ՀԲԸՍ Ալեք Մանուկեան Կեդրոն - Պոյաճեան Սրահ
2495 E. Mountain Street, Pasadena
Մուտքի նուր՝ \$50.00 (ներառեալ աղանդեր)
Տոմսեր ապահովելու համար հեռաձայնել
ՀԲԸՍ Կեդրոն՝ (626) 794-7942
Ապրիլ Գրատուն՝ (818) 243-4112 • Պերճ Գրատուն՝ (818) 244-3830

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԸ ԱՌԻԹՈՎ

52 տարեկան Ա. Պ. (ինքնուժեք թիւերը պահպանելու համար անունը չենք տար) ըսաւ, թէ Սեդան եւ իր որդիին՝ Հրաչ Ղազարեան, իրեն շնորհած են ապրելու նոր կեանք մը: «Կուրծքիս ուռուցքը կ'արիւնէր, բայց ես պէտք է շարունակէի աշխատիլ՝ երեխաներս պահելու այս կամ այն կերպով: Սեդան եկաւ, տեսաւ եւ գիտ հիւանդանոց տարաւ: Չեմ կարող մոռնալ, թէ ինչպէս այս բոլորովին անձանօթ տիկինը սպասեց մինչեւ վերջ եւ յետոյ խոստացաւ ապահովել բուժումի ծախսերը»:

«Ես, -շարունակեց Ա.Պ., -մերժեցի գործողութեան ենթարկուիլ, որովհետեւ պարզապէս կը սարսափէի: Տիկ. Սեդան եւ Ղազարեան Բարեսիրական ֆոնդը, որ հիմա նոր անունով կը ճանչցուի իբրեւ Փարոս Հիմնադրամ, այդ օրուընէ սադին ինծի նեցուկ եղած են: Իր որդին՝ Հրաչը, իմ երեք երեխաներուն հովանաւորն է, ամսական 150 տոլարով եւ բժշկական հոգածութեամբ: Իրենց օգնութեամբ է որ կը պայքարեմ իմ հիւանդութեան դէմ եւ անդադար կ'օրհնեմ ու կ'աղօթեմ այս բարի մարդոց եւ իրենց գործին համար», -եզրակացուց Ալվարդ Պ.:

Այս զգացումով աղօթքներ եւ օրհնութիւններ կը լսուին զանազան անձերէ, ընտանիքներէ եւ նպաստընկալներէ 1999-է ի վեր: Անկէ սադին Սեդա եւ Ջոհրայ Ղազարեաններ՝ Գալիֆօրնիայէն, եւ իրենց հաստատած Փարոս Հիմնադրամը եւ իրենց աշխատանքն ընդլայնած են երկու ուղղութեամբ.

ա. ՅՈՅՍԻ ՃՐԱԳ, որու միջոցաւ կարօտեալ ընտանիքներ Երեւանի եւ շրջակայքի մէջ կը ստանան ֆինանսական օգնութիւն, երեխաներու բժշկական խնամք եւ վիրաբուժական օգնութիւն,

բ. ԱՐԱԳԻԼ, որու նպատակն է չլի եւ անօգնական կիներ իրենց երեխաներով գրանցել մասնաւոր ծրագրին, որպէսզի անոնք եւս ստանան ֆինանսական օգնութիւն, հագուստեղէն, երեխաներու յատուկ պիտոյք եւ բժշկական խնամք: Եւ, ամենէն կարեւորը՝

գ. Այս բոլոր բարեսիրութեանց կեդրոնը հանդիսացող Պտղունքի կեդրոնը, որ 5.5 արտավար հողի վրայ ունի մանկապարտէզ դպրոցական համալիրը՝ 60-է աւելի երեխաներով: Այնտեղ երեխաները կը ստանան հոգածու դաստիարակութիւն, հագուստեղէն եւ երեք ժողով սնունդ:

Այս կեդրոնը վերջերս ընդարձակած է բարեսիրական դաշտը՝ ընդունելով նաեւ թերանունդ-անօթի տարիքաւորներն ու յոյն Պտղունք գիւղի բնակիչներէն: Պտղունքը Երեւանէն էջմիածին տանող ճամբու վրայ փոքրիկ գիւղ մըն է: Ջոհր զնա, այլապէս Ս. էջմիածին կամ Ս. Հռիփսիմէ տանող ճամբուն վրայ կարող էք չնկատել այս բարիկամեցողութեան ովագիսը, որ արդէն դարձած է նախանձելի իրականութիւն:

Մայր Տիկին Սեդա Ղազարեան եւ իր դուստրը՝ Թալին Կուրիքեան, վերատեսուէն են այս ձեռնարկին՝ հոգալով ամէն մանրամասնութիւն թէ այստեղ՝ ԱՄՆ-ի եւ թէ մասնաւոր Հայաստանի մէջ:

Երկու երկրներու մէջ ալ հիմնադրամը գրանցուած է իբրեւ ոչ-շահութաբեր բարեսիրական NGO (ոչ-կառավարական կազմակերպութիւն): Այս հիմնադրամը եւ իր իրագործումները պատկան իշխանութիւններու կողմէ հետեւողականօրէն քննուած են, եւ հաւաստի ու վստահելի ըլլալը վկայուած է: Այս հիմնադրամի գոյութիւնը եւ աշխատանքը փաստ են եւ անկասկածելի իրողութիւն: Անոնք, որոնք պիտի ուզէին աւելի մօտէն եւ մանրամասնօրէն ծանօթանալ, կարող են համակարգչային կայքի միջոցաւ ստանալ իրենց գոհացումը, այցելելով www.hetq.am, որ կը պատկանի հետաքրքիր լրագրողներու կազմակերպութեան: Այնտեղ հայերէն տեղեկագրի համար սեղմեցէք դեկտ.4.07եւ, իսկ անգլերէնի համար՝ դեկտ.17.07 (Path of Charity), ինչպէս նաեւ այցելեցէք www.parosfoundation.org

Համատարած շարահանութիւններու եւ կասկածներու մթնոլորտի մէջ Փարոս Հիմնադրամը կը փայլի իր թափանցիկ եւ հաշուետու գործունէութեամբ: Աշխատանքային դաշտը եւ նպաստընկալներու թիւը օրէօր կ'ընդլայնուի, եւ Ղազարեաններու հաստատ ուղղումն է դիմագրաւել գալիք մարտահրաշխանները: Իրենց պատրաստակամութիւնը անսահման է, բայց միջոցները՝ սահմանափակ: Տէր եւ տիկին այս անգուզական գոյգը իրենց ուղեւորութիւնը սկսան նախ օգնելով հագողութիւն, Օրէնճ Քաունթի, Գալիֆօրնիա: Անոր յաջորդեց պահանջքը ֆինանսական օգնութեան, մասնաւորաբար Հայաստանի, Իրաքի եւ



Յորդանանի մեր հարազատներուն, ուր ապաւինած են շատեր իրաքեան դեպքերու պատճառաւ:

Այսօր իրենց ուշադրութիւնը եւ օգնութիւնը կեդրոնացած են Հայաստանի եւ այն վայրի վրայ, որ կը կոչուի Պտղունք, որ միայն 15 քմ է Երեւանէն: Ապրելու միջոցները եւ յարմարութիւնները այստեղ, ինչպէս գրեթէ բոլոր գիւղերուն մէջ, կը մնան տակաւին նորմալ մակարդակէն ցած: Բնակիչները պարզապէս չունին ամենէն տարրական յարմարութիւնները, որ մենք ընդհանրապէս կ'ընդունինք իբրեւ բնական եւ պատրաստ տուելաներ, ինչպէս սնային մշտահոս ջուր, էլեկտրական ոյժ եւ կազ: Գիւղապետութիւնը միջոց չունէր սնունդ տալու մանկապարտէզի 36 երեխաներուն: Այսօր անոնց թիւը 60-է վեր է: Ղազարեանները ապահոված են, որ այս երեխաները ստանան պէտք եղածը՝ իրենց եւ շարք մը բարեկամներու եւ ազգականներու տրամադրած ֆինանսական օգնութեամբ: Այցելուն կրնայ սկսնալու ըլլալ եղած բարեկարգութեանց, որոնք իրագործուած են մինչեւ օրս: Սիրելի ընթերցող, յաջորդ այցելելու թեանդ ընթացքին, եթէ կարելի է, տեղ բաց Պտղունքին, որ ձեր ճամբուն վրայ է: Բարի գործ մը ըրած ըլլալու գոհունակութիւնը պիտի ունենաք վստահօրէն:

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՍ ԸՆՏԱՆԻՔ ՀՈՎԱՆԱՌՈՐԵԼՈՒ ԿՈՉ
Մասնաւոր կոչով կը դիմենք մէկ անգամուան համար կամ ամսական կամ տարեկան նուիրատուութեամբ հովանաւորելու եւ մասնակցելու բարեսիրական եւ հայրենասիրական այս ազգաշէն գործին: Այս գիւղը եւ գիւղին անօգնական բնակիչները եւ մասնաւոր երեխաները մեր օգնութեան պէտքն ունին ան-

յետաձգելիօրէն:

ԻՆՉՊԻՍ ԿԱՐԵԼԻ Է ՕԳՆԵԼ
Էլէքտրոնային փոստի հասցէն է parosfoundation@yahoo.com Այնտեղ կը տրուին զանազան ընտրութիւններ.

1. 350 տոլար ամիսը պէտք է՝ կերակրելու համար 60 երեխայ: Քունուէրը կարող ես տալ ամսական 100 տոլարով եւ հովանաւորել երեխայ մը:

2. Հովանաւորել երեխայ մը եւ մայր մը՝ պատասխարելու եւ կերակրելու, որպէսզի փողոցները մուրալու չստիպուին:

3. Կը վստահեցնենք, որ Տիկ. Սեդան եւ կամ տեղական աշխատակիցը անձնապէս կ'այցելեն վայրերը՝ ստուգելու համար պահանջքը եւ օգնութեան մակարդակը հետեւողականօրէն:

Նորանոր անհատներ, լսելով այս աշխատանքներու մասին, իրենց նպաստը կը բերեն՝ իրենց կարողութեան եւ միջոցներու համաձայն: Այդ բոլորի հետ պահանջքը եւ կը շատնայ, եւ օգնութեան պէտք ունեցող ընտանիքներու թիւը կ'աւելնայ, եւ մեր աշխատանքը դարձած է շարունակական պայքար մը: Օգնեցէք, որ յաղթահարենք այդ դժուրութիւնները:

Երբ էլէքտրոնային հասցէին կամ կայքի միջոցաւ կապ պահէք, ըսէք, որ Տէր Վրթանէս եւ Երեցկին Անահիտ Գալայճեաններու թելադրութեամբ եւ յանձնարարականով կ'առաջնորդուիք օգնելու այս սուրբ գործին:

Մենք սկսնալու եղած ենք աշխատանքներուն: Վկաներն ենք Ղազարեաններու խանդավառութեան եւ խանդաղատանքին եւ Փարոս Հիմնադրամի անձնակազմի ցուցա-

Մար.ք էջ 20

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHLALAH DANCERS

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB
626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄՈՒՍԱ ԼԵՈՅԻ ՏՂԱՆ

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Ահա ինչ էր նաև իր յուշերում գրել հայագրի ծովային սպայ Տիրան Թէքէեանը՝ «Վիկտոր Հիւկոն գովերգել է ֆրանսացի տղային, որ իրեն էլ գնդակահարէին կոմունար լինելու համար, յոյն տղային, որ գնդակ ու վառօդ էր ուզում իր սիրելի հայրենիքի անկախութիւնը պաշտպանելու համար: Բայց որ բանաստեղծը պիտի երգի տասներկու տարեկան այն մանչուկի հերոսութիւնը...»:

Տարին էր 1871, հէքիաթային գարնան Մայիս ամիս, նորոգ կեանքի վառ շողեր էին իջել Փարիզի վրայ, տիեզերքից գեփիւռ էր հոսում մարդկանց սրտերի ծովիկները նոր աւիւնով ալիքելու, ծառերի սաղարթների կանաչն էր հոսում պողոտաների վրայ, Մէյնան երգելով «ճեմունմ» էր, գարունն էր Փարիզում: Փէր Լաշէզ գերեզմանատան դամբաններին խոնարհած ծառերը ծիածանի հագար-հագար գոյների ծաղկաթերթիկներ էին հոսում տապանների վրայ, գարունն էր իջել գերեզմանատանը, որ իր հէքիաթային խորհուրդով այցելուների դէմքերի վշտին լոյս էր ցօղում:

Այդ գարնանը, Փարիզում ազատ կեանքի ըմբոստութեան դրօշ էր ծածանուել: Փարիզում ազատութեան հողմերն էին շառաչում, մարդիկ ելել էին կոուրի՝ իրենց երկիրը իրենք տնօրինելու: Իշխողը չէր հանդուրժել, հարիւր հազար զինուորներով, թնդանթններով Փարիզ էին արշաւել սպաններու ազատութիւնը: Կուր էր, պատնէշները վրայ ազատութեան դրօշներ ծածանած մարդիկ գարկում էին, գարնուն էին, անհաւասար էր եղել մարտը, նահանջել էին ֆեր Լաշէզ Գերեզմանատուն՝ կուուր վերջին պատնէշը: Ընկաւ ազատութիւնը, մարել էին նրա հողմերը, կալանուած մարտիկներին գերեզմանատան պարիսպի պատի տակ շարքերով գնդակահարում էին: Խորտակուած պատնէշի փլատակները դատարկ փամփուշտակալը կրծքին մի տղեկ մրրկահաւի խոլանքով վազում էր դէպի զինուորները, կանչելով որ ինքն էլ այդ կուուրի մարտիկ էր եղել, կանգնել պատի տակ ձայնելով՝ գնդակահարէք... ահա ազատութեան համար մարտնչող ոգին, որին ոչ մի տիրակալ չկարողացաւ սպաննել, անկարելի է:

Հագար-հագարներով դէպի արեւմուտք էր արշաւում անապատի դաժանութիւնը իր հոգում ամբարած սելճուկ-թուրք ցեղախումբ: Հասան յոյների կայսրութեան մայրաքաղաք՝ Բիւզանդիոն-Կոնստանդնուպոլիս, նուաճեցին, ասպատակեցին այն: Սուլթանը նժոյգին բազմած իրենց տաճար մտաւ, պոկեց խաչերը, այրեց Մարիամ Աստուածածնի ու նրա Յիսուս որդու պատկերները, մարեց տաճարի որմերից ժպտացող սրբացած մարդկանց ու հրեշտակների լոյսը, իրենց ապօթքի վայր հռչակեց այն: Եւրոպան անհող դիտում էր, օգնութեան չհասաւ, նրանք յետոյ պիտի այրէին դէպի իրենց երկրներ տանող ճանապարհները եւ մինչեւ Վիեննայի դարպասները: Իրենց իմաստունները պիտի կանչէին՝ «Աւէր ու հրդէհ, այստեղից թուրքն է անցել»: Չորս հարիւր տարիներ յետոյ միայն յոյների սրտերում պիտի պողթկար ազա-

տութեան ղողանչը եւ 1821 թուականին եկեղեցու խորանից վեղարաւոր մի յոյն կուուրի պիտի կանչէր ժողովուրդին՝ հայրենի երկրին ազատութիւն բերելու: Հելլատալում կուուր էր, ազատութեան կուուր: Այդ կուուրն յոյն մի տղայի սրտում հերոսութեան ոգու շառաչ էր յորդել, մարտում իր հրացանի համագարկերը շարունակելու համար վառօդ ու գնդակ էր պահանջում, հայրենի անկախութեան, նրա որդեաց ազատութեան համար մղուած կուուրը շարունակելու: Ամբողջ Յուստանն էր փառաբանել մարտի դաշտում նրա քաջութիւնը: Նրա ազատութեան կուուրի կանչերը հասել էին հեռու Ֆրանսա եւ նրանց իմաստուն գաւակ՝ Վիկտոր Հիւկոն գովերգել էր նրա դիւցազնական ոգին: Ֆրանսացի ու յոյն այդ տղաները ազատութեան դրօշներ պարզած, ճակատին քաջութեան դափնի պսակներով քայլում են իրենց յաւերժութեան ճանապարհներով:

Աստուածների հուր է հոսած Մուսա Լերան գագաթին, կարմիր է այն, քաջութեան ոգի է ժայթքում նրա բարձունքներից, այն հոսում իր լանջերին փարած գիւղակների ռանչպարների սրտերին: Մուսիսները-մուսաների լեռ, Մուսա Լեռ էին կոչել այն: Մայրամուտի արեւն էր խառոյկ վառում նրա գագաթներին: Ասողերն էին իջնում այնտեղ, տիեզերքի անհունութեան լոյսի խորհուրդ ցօղելու: Երկիրը յառնած «սիգապանծ» այդ լեռները ազատութեան ճախրանք էին հոսել լեռնական հայերի հոգիներին: Հայոց լեռնաշխարհը հայոց հայրենի տան տանիքն է, որտեղ իրենց բարեպաշտ հին աստուածներն էին իջնում՝ երկրին բարիք շաղելու, բարութեան, քաջութեան, մայրութեան, սիրոյ, իմաստութեան, ազատութեան լոյսի անձրեւ տեղալու հայոց աշխարհի վրայ:

Խաղաղ գիւղերի խաղաղ ռանչպարներ, իրենց Հայկագուն, Հայրենապաշտ Տիգրան Արքան էր քսան դարեր առաջ բերել այդ լերան լանջեր: Պատուել էին այդ

լաջերի կողերը, հող արարել, այն մայրացրել ցորեանի արտերով, այգիներով, պարտէզներով: Անապատի Սելճուք թուրքեր իրենց ճանապարհի երթին հասել էին նաեւ յոյն սելեւկեանների Հուրով՝ չքնաղ Անտիոք, հասել Մուսա Լերան լանջերի փէշերին, չէին թողել...: Հայ էին այդ լեռները, հարիւր քառակուսի մղոն տարածութեամբ կիսանկախ լեռնաշխարհ, ոչ մի օտար:

Պոթիլում էր աշխարհը թնդանթնների որոտներով, լուռ էին հայոց աշխարհի տաճարների գանգերը: Գարուն էր, նրա հէքիաթն էր ղողանչում հայերի սրտերին: Այդ գարնանը հայոց աշխարհի լեռերին կարմիր անձրեւ տեղաց, նրա շէնքերում այրում էին գարունը, սպաննում հայերի հոգիներում գարնան գարթօնքի շունչը: Դարեր առաջ արիացի արեւային հայերու սպաննել էին իրենց հին աստուածներին, մարել իրենց տոհմական հին հաւատքը, մարել իրենց աշխարհին իջած Միհրի լոյսի կրակը, մարել Վահագնի եղգան բոցից ժայթքած քաջութեան, կուուր, ազատութեան բոցերը: Սակայն Մուսա Լերան լանջերին փառած հայերի եկեղեցիներում իրենց հին աստուածների մեհեանների խորհուրդի լոյսը չէր մարել, իրենց պաշտած խաչի սրբութեան մէջ Միհրի, Վահագնի քաջութեան լոյսն էր առկայծ: Իրենց հայրենի հողի, իրենց լեռների ոգու ուժը հերսութիւն, քաջութիւն էր հոսել իրենց սրտերին: Ոչ էին ասել ազգարարութիւններին, լեռներին իջած հին աստուածները կուուր են կոչել իրենց եւ նրա բարձունքների պատնէշներին թշնամուն մարտի էին կանչել, կրակ տեղացել նրա շարքերին:

Հարիւր-հարիւր թուրք զինուորներ Մուսա Լեռ էին բարձրացել լեռնականներին ընկճելու: Պաշտպանական ամրութիւնների պատնէշներից հրացաններն էին պայթել, ձորերն էին սխրագին արձագանգել: Որոտում էր լեռը, հայ շինականը ճակատում էր թուրքին, մարում նրա յոխորտանքը, սպաննում բազում զինուորներին շալակած՝ թշնամին փախչում էր մարտադաշտից: Թնդանթններով

ու հագար-հագար զինուորներով նորէն էր յարձակուել թշնամին, տասներկու ժամ տեւած ճակատամարտում, հայ քաջերը աննահանջ դիմադրել էին, չէին կարողցանել բարձունքների պատնէշները ընկճել: Եօղունջուղից Գալուստեան գերդաստանի քաջազուն ռանչպար Պետրոսը ծառի կանաչ ոստերով ծպտուած մօտեցել էր թնդանթններին եւ տարբեր դիրքերից արձակած հինգ գարկերով զգտնել չորս թնդանթնաձիգներին, որից յետոյ թուրքի թնդանթն չէ որոտացել Մուսա Լերան լանջերին:

Պաշտպանական ու ընդհանուր վարչական մարմին էր կազմուել, որի ատենապետութիւնը վստահել էին Մուսա Լեռիների վեց գիւղակների այդ կուուր ոգեշնչող՝ Եօղունջուղից Աւետարանական Պատուելի Տիգրան Անդրէասեանին: Կազմակերպուել էր կուուր ռազմավարութիւն, ընդհանուր կառավարում զինուորական տասնեակներ, պահեստային զօրք՝ յանձինս երեք չէթէեական խմբերի, պարեկութիւն, ծովափին, լերան գագաթին պարզած դրօշներով պարեկութիւն, տեղական կառավարում, «Թելֆոնի Տղաք» կազմուած տասը-տասերկու տարեկան տղաներից, որոնք պատնէշներից թշնամու յարձակումների լուրն էին հասցնում կեդրոն: Հինգ դիւցազնական յաղթական ճակատամարտերով մարել էին թուրքի հագար-հագար կանոնաւոր զօրքի եւ աւարառու աշխարհագորայինների՝ Մուսա Լեռը ու նրա շինականներին նուաճելու յոխորտանքը:

«Թելֆոնի Տղաք» խմբում տասներկու տարեկան որբուկ տղայ էր եղել, հայրն էր գոհուած եղել լերան մարտերից մէկում: Ենթ էր եղել անուրը այդ տղայի, հաւանաբար Պիթիաս գիւղից, որտեղ այդ անուրով էին յաճախ մկրտած եղել արու գաւակերին: Հայոց այդ լեռների ոգու ուժն էր հոսել այդ մանչի սրտին, իրենց Նահապետի քաջութեան յորձանքն էր փոթորկել հոգին: Ամրակազմ, յանդուգն տղայի յամառ պահանջներից յետո՛ւ

Շար.ը էջ 23

GREEK NIGHT
ՅՈՒՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Մ.-ի Ընկերային Յանձնախումբի

Երեկոն կը խանդավառէ Սիրուած Երգիչ՝
Գօգո Հայիթեան
ու իր Գուսագալուստը

Շարաթ, 3 Մայիս 2008
Երեկոյեան 8:00-էն սկսեալ
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողաճախեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena

ՏՈՄՍԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ՝
Մանուկ (213) 624-6451 կամ Ալիս (626) 794-6966
Մուտքի նուէր՝ \$40.00



ՓՐԿԱՐԱՐ ԸԱՅՐ

Շարունակուած էջ 18-էն

դրանով հանդերձ որ բաւական առիթ է ունեցել մեր ինչքը կողողատելու եւ անխղճօրէն մեզ մահուան ճիրանում թողնելու ու հեռանալու, սակայն ցուցաբերելով դեր մարդասիրական արարք մեզ ազատել է վերահաս մահից, մեր խորին շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնն ենք յայտնում նրան: Անշուշտ անուրանալի է ոստիկանների աշխատանքն ու հսկողութիւնը, գնահատում ենք իրենց:

Ոստիկանները ձեռնուկով բռնորդի հետ մնաք բարով ասելով մեկնում են:

Արտեմն էլ քայլ առաջ է դնում, որ հրաժեշտ տալով բաժանուրի, սակայն վաթանդուստը՝ ընտանիքի հայրը, դէմ է կենում եւ պահանջում է Արտեմից իրենց միանալ ասելով.

-Այսուհետեւ դու մեր տան հարազատ բարեկամն ես, թերեւս դու կասկածես իմ ասածի վրայ ասելով՝ դժուար թէ կրօնով տարբեր մէկերի ջրերը մէկ հունով գնայ, ճիշտ է, դու հայ քրիստոնեայ ես, իսկ ես՝ մուսուլման, լաւ իմացիր Արտեմ, կրօնների փիլիսոփայութիւնը հիմնուած է մարդասիրութեան, ազնուութեան, սրտցաւուութեան վրայ, իրար նկատմամբ գոհողութեամբ եւ օգտակարութեամբ: Դու ինչո՞ւ փրկեցիր մեր կեանքը, մենք՝ մուսուլման, դու՝ քրիստոնեայ, քանի որ քո մէջ խօսել է մարդասիրութիւնը, նմանին փրկել, երբ կեանքը վտանգուած է, հալալ լինի քեզ մօրդ կաթը: Երանի այն օրը, որ երկրների ղեկավարները իրենց արարքն ու գործերակերպը մարդ արարածի բարօր կեանքի համար լինի առանց խտրութեան սեւ ու սպիտակի եւ կրօնի:

Աղայէ վաթանդուստը խօսում էր կամաց եւ նուազ ձայնով, քանի որ դեռ լաւ ապաքինած չէր, նա իր խօսքը վերջացրած համարելով դարձաւ Արտեմին ասելով,

-Առանց այլեւայլի դու կը գաս մեր հետ, գիտեմ տնից հեռացել ես եւ մինչեւ այս րոպէին կնոջդ չես տեղեկացրել քո ուր լինելը, հիմա նա խիստ անհանգիստ վիճակումն է եւ սպասում է քեզ: Գնանք մեր տուն, շատ չեմ սպասեցնի քեզ, նայի՛ր, տե՛ս, ժամը 5.30-ն է , ձմռան ուշ է լուսանում:

Վարձած երկու ինքնաշարժերով հասան տուն:

Բոլորով միասին հիւրասեն-

եակում տեղ գրաւեցին բազկաթոռների վրայ:

Աղայէ վաթանդուստը բարի գալստեան խօսքով սկսեց իր խօսքը.

-Սիրելի Արտեմ այս երկրորդ անգամն է գտնուում ես այս բնակարանում, առաջինը՝ որպէս փրկարար, երկրորդը՝ որպէս հարազատ մեր բարեկամը, նախ՝ կուզեմ քեզ ներկայացնել իմ ընտանեկան կազմը: Իմ անունը Քամրան է, տիկնոջս՝ նինուֆար, մեծ տղայինս՝ Արաշ, կրտսեր տղայինս՝ Դարիւշ, մեծ դստերս՝ Իրանդուխթ, կրտսեր դստերս՝ Մարիամ: Ընտանիքիս իւրաքանիւրը իր տեղն ու յարգանքն ունի կնոջից սկսեալ, կարգ ու կանոն կայ այս տան մէջ, սէր ու յարգանք կայ , պարտաճանաչութիւն եւ պատասխանատուութիւն, փառք Աստուծոյ խղճալ եւ հանգիստ կեանք ունենք, մեծ նեղութիւններով եմ այս տեղը հասել:

Նա ընտանեկան կազմը ներկայացնելուց յետոյ ժպտերես դէմքով հայեացքը ուղղեց Արտեմի կողմը ասելով.

-Գիտեմ ձեր նոր տարին մօտիկ է, այս նոր տարւայ սեմին շնորհաւորում եմ քեզ, ընտանիքիդ եւ ծնողներիդ: Քո պատմածներից հասկացայ, որ նիւթապէս անձկութեան մէջ ես գտնուում, խնդրում եմ, ընդունես այս ծրարը եւ յոյսով քո կեանքի յաջողութեան եւ ուրախութեան միջոց դառնայ: Քո կատարած արարքի դիմաց այս չնչին է, դրամ կարելի է ձեռք բերել, բայց գնացած կեանքը չի կարելի վերադարձնել, դու եղար այն բարի իշխանը, որ քո սիրագործութեամբ ընտանիքով կեանքին վերադարձանք, փառք ու պատիւ քեզ: Այլեւս դու օտարական չես, դու մեր արժէքաւոր բարեկամն ես, մեր տան դուրը անարգելք ամէն րոպէ բաց կը լինի քո երեսին: Նկատելով այգեբացը կատարուել է, արփին գթաւատ արդէն իսկ ծագել է, չեմ ուզում քեզ երկար սպասեցնել, քանի որ մեծ անձկութեամբ կ'ուզես ձերտնց մօտ լինել: Արա՛շ, պատրաստուի՛ր մեքենայով մեր եղբայր Արտեմին տուն հասացնես:

Արտեմն իրեն շատ երջանիկ էր զգում, որ իր արարքով սրտեր է ուրախացրել, նա համոզուել էր, որ մարդս իր բարի եւ օգտակար գործերով իր կեանքը իմաստաւորում, դրախտային կեանք է ստեղծում երջանիկ եւ պայծառ չիշատակման արժանի դառնում սերունդների սրտում:

Արտեմը տան ճամբին էր, բռնորդին կարօտել էր եւ րոպէ առաջ կ'ուզէր Ռիմային հանդիպել, մտածում էր նրա մասին, թէ այդ կուտարիսօսքից յետոյ Ռիման ինչպէս կը ընդունի իրեն:

Ռիման ամբողջ գիշերը չէր կարողացել դադարել՝ մշտական ականջը սրած դուռն բացուելուն սպասել, ամէն մի ձայն նրա ուշադրութիւնը քաշում էր դէպի իր կողմը , բայց յուսախափ՝ լուակեաց արցունք էր թափել եւ իրեն յանդիմանում էր առաջացրած այդ օրինակ ասուկոսի համար:

Նա որոշել էր լուռ մնալ, որեւէ օգնութեան քայլ չվերցնէլ մինչեւ լուսանալը, երբ տնեցիները արթնացած են, երբ քաղաքը նոյնպէս արթնացած է: Ռիման հաւատացած էր երկնակամարի շառագունութեան պէս Արտեմը ուր որ լինի կ'երեւայ, մի տեսակ իր սրտին պատգամ էր եղել, որ Արտեմը կը գայ:

Այգը հեզասահ խաւարը իր ճամբից դէպի ետ մղելով գալիս էր առաջ, ոչինչ կը դիմանայ նրա լոյսի դիմաց, նա իր նուրբ ու բարակ թեւերը մեղմ ու հանդարտ սփռելով ամէն տեղ հալածում է խաւարը իր հետ բերելով կեանք, աշխատանք եւ բերկրանք: Արդէն ծէգը բացուել էր, արեւը սարի ետեւից դէպի երկինք էր բարձրանում: Ռիման իր հայեացքը պատուհանից դէպի լոյսին ուղղած մրմնջալ սկսեց.

-Արեւը ծագել է, ամէն տեղ լոյս է, շէնքերը լոյսի մէջ են, փողոցները, ծառերը, ամէն ինչ լոյսի մէջ են, բա ուր մնաց Արտեմը, ինչո՞ւ չի գալիս իմ սիրելի էրիկս:

Ռիմայի սիրտը առաւել ալեկոծուեց, նա սկսեց վատ բաներ մտածել.

-Չլինի իմ Արտեմին փորձանք է պատահել, Տէ՛ր Աստուած, օգնի՛ր նրան, թող նրան ոչ մի բան չպատահի, թող նա ողջ ու առողջ տուն վերադառնայ, թող նա գայ իր

սիրասուն գաւակների մօտ, խօսք եմ տալիս էլ չկուռեմ հետը, էլ ցաւ չպատճառեմ իրեն կծու եւ վիրաւորական խօսքերով...

Ռիման այս մտորումների մէջ յուսաթափ ու անօգնական անիծում է իր բախտը, յանկարծ ոտնաձայն լսեց, վազեց դէպի դուռը, այդ միջոցին դուռը բացուեց եւ Արտեմը ներս մտաւ, Ռիման Արտեմին տեսնելուն պէս խելակորոյս դէպի նա վազեց, նրան իր թեւերի մէջ առնելով սիրակէզ համբոյցներով ողորդեց նրա աչքերը, այտերը, շուրթերը, ամբողջ դէմքը բարձրաձայն ասելով.

-Իմ արեւ Արտեմ, էս դու ե՞ս, մատաղ լինեմ քեզ, վա՛յ, ի՞նչ տառապանք քաշեցի, ի՞նչ չար մտքեր էր, որ չանցաւ իմ գլխից՝ Փա՛նք քեզ Աստուած, Արտեմիս գտայ:

Արտեմը շփոթուել էր, մարդ ու կին գրկախառնուած արտասուում էին..

Նրանց յուզախառն կանչերից տնեցիները բոլորը արթնացել եւ շրջապատել էին նրանց, բոլորը ապշել էին ամէն ինչից անտեղեակ, չէին իմանում լացեն թէ ծիծաղեն: Ամէն ինչ բացայայտուեց:

Ուրախութեան արցունքներ թափեցին բոլորի աչքերից:

Կեանքը քաղցրացաւ եւ գեղեցկացաւ:

1997 թվականի նոր տարին լի բերկրանքով տօնակատարուեց՝ բոլոր հարազատներով ճոխ սեղանը շրջապատած, գեղեցիկ տօնածառի երփներանգ լոյսերի շուքին տակ:

Հարազատական այդ տօնակատարութեան բարձր տրամադրութեամբ ներկայ էր աղայէ Քամրանը իր ընտանեկան կազմով:

Քէֆը հայկական հնչում էր ուրախ ու գուարթ:

1997 թվականը արգասաւորեց Արտեմի կեանքը մեծ յաջողութիւններով:

(ՎԵՐՋ)

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՄԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԴԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"




MISSION WINE & SPIRITS

 BV Coastal All Varietals 6⁹⁹	 Jose Cuervo Especial Tequila 10⁹⁹ 750ml 20⁹⁹ 1.75L	 Johnnie Walker Blue Scotch Whisky 124⁹⁹	 1800 Reposado Tequila 16⁹⁹
 Don Julio Blanco Tequila 24⁹⁹	 Cristall Vodka 1.0L 11⁹⁹	 Patron Añejo Tequila 39⁹⁹	 Two Fingers Tequila 8⁹⁹
 Johnnie Walker Black Scotch Whisky 19⁴⁹ 750ml 49⁹⁹ 1.75L	 Grey Goose Vodka 20⁹⁹ 750ml 49⁹⁹ 1.75L	 Skyy Vodka 9⁹⁹ 750ml 19⁹⁹ 1.75L	 Belvedere Vodka 20⁹⁹
 Hennessy Cognac 20⁹⁹ VS 31⁹⁹ VSOP	 Courvoisier VS Cognac 18⁹⁹	 Absolut Vodka 14⁹⁹	 Russian Standard Vodka 11⁹⁹
 Cazadores Reposado Tequila 20⁹⁹	 Don Julio 1942 Tequila 84⁹⁹	 Don Julio Añejo Tequila 32⁹⁹	 Johnnie Walker Green Label 36⁹⁹ Gold Label 46⁹⁹
 Ciroc Vodka 17⁹⁹	 Ketel One Vodka 18⁴⁹	 Jean-Marc XO Vodka 34⁹⁹	 Crown Royal Canadian Whiskey 14⁹⁹
 Ora Vodka 11⁹⁹	 Courvoisier XO Cognac 79⁹⁹	 Patron Silver Tequila 33⁹⁹	 Chivas Regal 12-Year Old Scotch Whisky 17⁹⁹ 750ml 35⁹⁹ 1.75L
 Imperia Vodka 17⁹⁹	 Gantous & Abou Raad Arak 12⁹⁹	 Massaya Arak 20⁹⁹	 Hennessy XO Cognac 99⁹⁹

1785 E. Washington Blvd., Pasadena, CA 91104

(626) 794-7026 • (626) 794-7368

Near the corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm

www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 05/07/08 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded

• Prices subject to change without notice • No checks or credit cards

All items are 750ml in size unless specified.

ՄԱՐԶԱԿԱՆ

**ԵՒՐՈՊԱՅԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՔԱԿԱՆԸ ՄԵԴԱԼՆԵՐԻ
ՀԱՇՈՒԱՐԿՈՎ ԳԱՆԱՉՈՒԵՑ ԱՌԱՋԻՆԸ**

Հայ ծանրորդների փայլուն յաղթանակով աւարտուեց իտալական Լիգնանո քաղաքում անցկացուած Եւրոպայի առաջնութիւնը: Հայաստանի կանանց եւ տղամարդկանց հաւաքականներն իտալական մրցահարթակում ընդհանուր առմամբ նուաճեցին 17 մեդալ, որից՝ 13 ոսկէ, 3 արծաթէ, մէկ բրոնզէ: Մեդալների քանակով մեր ծանրորդները թիմային ընդհանուր հաշուարկով զբաղեցրին առաջին տեղը: Միաւորների հաշուարկով թէ՛ տղամարդկանց, թէ՛ կանանց հաւաքականը զբաղեցրին 4-րդ տեղը: Դա հնարաւորութիւն տուեց մեր կանանց հաւաքականին Պեկինի օլիմպիադայում ներկայանալ մէկ մասնակցով: Տղամարդկանց թիմում օլիմպիական մրցահարթակ դուրս կը գալ 5 ծանրորդ:

Առաջին մեդալները նուաճեցին Հայաստանի կանանց հաւաքականի ներկայացուցիչները:


63կգ քաշային կարգում Մելինէ Դալուզեանը երկամարտի 235կգ արդիւնքով գրաւել է առաջին հորիզոնականը դառնալով Եւրոպայի ախոյեան: Մելինէն առաջին է եղել թէ՛ հրում, թէ՛ պոկում վարժութիւններում՝ մէկական փոքր ոսկէ մեդալ նուաճելով նաեւ այդ վարժութիւններում: Դալուզեանին յաջորդած թրքուհի Սիբել Սիմսեկը երկամարտում բարձրացրել է ընդամենը 226կգ:



Մելինէ Դալուզեան

Հիանալի ելույթ ունեցել նաեւ 69կգ քաշային Նազիկ Աւդալեանը, որը երկամարտի 242կգ արդիւնքով դարձեալ գրաւել է առաջին հորիզոնականը: Աւդալեանը նաեւ լաւագոյն է եղել հրում եւ պոկում վարժութիւններում:

Ապրիլի 17-ին հրում վարժութիւնում ոսկէ մեդալի արժանացաւ Հռիփսիմէ Խուրշուդեանը (75 կգ, Քասախ)՝ 141 կգ արդիւնքով: Սակայն, հայ մարզուհին պոկում վարժութիւնում չկարողացաւ յաղթահարել նախապէս պատուիրած 115 կգ-ն եւ զրկուեց երկամարտում խաղարկուած մեդալներից:



Հռիփսիմէ Խուրշուդեան

Տղամարդկանց պայքարում վարպետութեամբ աչքի ընկաւ Տիգրան Գ. Մարտիրոսեանը (69 կգ, Գյումրի): Նա պոկեց 158 կգ, հրեց 188 կգ եւ երկամարտի 346 կգ արդիւնքով նուաճեց Եւրոպայի ախոյեանի կոչումը: Տիգրանը ոսկէ մեդալի արժանացաւ պոկումում, իսկ հրումում՝ «արծաթի», քանզ որ նրա անձնական քաշը ծանր էր Եւրոպայի անցեալ տարուայ ախոյեան ֆրանսացի Դենսալ Դաբաւայից, որն այս անգամ բաւարարուեց 2-րդ տեղով: Տ. Մարտիրոսեանը նաեւ սահմանեց աշխարհի երիտասարդների 7 ուկերդ: Նույն քաշային կարգում Հայաստանը ներկայացրած Արա Միրզոեանը (էջմիածին) գրաւեց 12-րդ տեղը:

85կգ քաշային Տիգրան Վ. Մարտիրոսեանը դարձաւ Եւրոպայի առաջնութեան բացարձակ ախոյեանն իր քաշային կարգում եւ Հայաստանի 4-րդ ախոյեանն այս մրցաշարում:



Տիգրան Վ. Մարտիրոսեան

Երկամարտում Տիգրան Վ. Մարտիրոսեանը յաղթել է 377կգ արդիւնքով՝ 4կգ առաջ անցնելով ռուս Վասիլի Պոլովնիկովից եւ 15կգ՝ բուլղարացի Գէորգի Մարկովից: Պոկում վարժութիւնում Տ. Մարտիրոսեանը հաւասարը չի ունեցել՝ 172կգ, իսկ հրում վարժութիւնում՝ 205կգ արդիւնքով:

էդգար Գէլորդեանը՝ 94կգ քաշային, նուաճել է արծաթէ մեդալ պոկում վարժութիւնում, իսկ 105կգ քաշային Արթուր Բաբայեանը 171կգ արդիւնքով զբաղեցրել է 8-րդ տեղը պոկում վարժութիւնում, ստացել է «0» հրում վարժութիւնում՝ տապալելով իր բոլոր 3 մօտեցումները ծանրաձողին:



Հայաստանի ներկայացուցիչ Արա Խաչատրեանը (77 կգ, Գիւմրի) պոկում վարժութիւնում ցուցց տուեց 165 կգ արդիւնք եւ արժանացաւ ոսկէ մեդալի, հրումում 191 կգ-ով բրոնզէ մեդալ նուաճեց, իսկ երկամարտում 361 կգ ցուցանիշով գրաւեց 2-րդ տեղը ու արժանացաւ փոխ-ախոյեանի կոչման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ապրիլի 19-ին տեղի ունեցան Հայաստանի ֆուտբոլի բարձրագոյն խմբի առաջնութեան երկրորդ փուլի հանդիպումները: Գրանցուեցին հետեւեալ արդիւնքները:

- «Ուլիս» - «Արարատ» 0-2
- «Կիլիկիա» - «Միկա» 0-3
- «Շիրակ» - «Գանձասար» 2-1
- «Բանանց» - «Փիւնիկ» 0-1

2 փուլից չեսոյ 6-ական միաւորով եւ զնդակների տարբերութեամբ առաջատար եռեակում են յաջորդաբար «Արարատը», «Միկան» եւ «Փիւնիկը»:

	Խաղ	Յաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կետ
«Արարատ» Երեւան	2	2	0	0	7-0	6
«Միկա» Աշտարակ	2	2	0	0	6-1	6
«Փիւնիկ» Երեւան	2	2	0	0	2-0	6
«Շիրակ» Գիւմրի	2	1	0	1	3-4	3
«Գանձասար» Կապան	2	0	1	1	1-2	1
«Բանանց» Երեւան	2	0	1	1	0-1	1
«Ուլիս» Երեւան	2	0	0	2	0-3	0
«Կիլիկիա» Երեւան	2	0	0	2	0-8	0

ԸՍՔԻՇՆԵՐ ՍՈՒՐԵՆ ՄԱՐԿՈՍԵԱՆԸ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՆՈՔԵԱՆԸ ՆՈՒՎՃԵՑԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՈՒՂԵԳԻՐ

Ապրիլի 20-ին Շուեցարիայի Մարթիզնի քաղաքում աւարտուեց ազատ ոճի ըմբշամարտի միջազգային վարկանիշային մրցաշարը: Հայաստանի մարզիկներից Սուրէն Մարկոսեանը (66 կգ, Գառնի) եւ Յարութիւն Ենոքեանը (84 կգ, Երեւան) գրաւեցին 3-րդ տեղը եւ արժանացան օլիմպիական ուղեգրի:

Ազատ ոճի ըմբշամարտի վարկանիշային վերջին մրցաշարը կը սկսուի Ապրիլի 30-ին վարչաւայում:

ԱՄՈՒՄՆԱՅԵԱԼՔ
ԱՐՏԵՄ ԵԳՈՅԵԱՆ ԸՆԴ ԱՆԱԻԴԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ
18 Ապրիլ, 2008 Կլէնտէյլ

Այս ուրախ առիթով «Մասիս» շաբաթաթերթի վարչութիւնը իր ջերմ շնորհաւորութիւնները կը յայտնէ ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար թերթիս աշխատակից Դոկա. Փրոֆ. Գէորգ եւ Անահիտ Խըլոբեանին:

ՇՆՈՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մոնթրէլայէն Տէր եւ Տիկին Ընկ. Մինաս Հոփուրեան բախտաւորուած են առջինեկ մանչ զաւակով, զոր անուանած են Ռաֆֆի:

Այս ուրախ առիթով «Մասիս» կը շնորհաւորէ նորածինի ծնողքը եւ նաեւ մեծ հայրը՝ Ընկ. Վարդավառ Հոփուրեանը:

ՇՆՈՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Ընկ. Մինաս Հոփուրեանի մանչ զաւակով բախտաւորուելուն ուրախ առիթով, Թորոնթոյէն Ընկերներ Սեպուհ եւ Արա Պոյաճեաններ սրտանց կը շնորհաւորեն նորածինի ծնողքն ու մեծ հայրը՝ Ընկ. Վարդավառ Հոփուրեանը եւ «Մասիս» շաբաթաթերթին կը նուիրեն \$100 տուար:

ԿՈՉ ՕԳՆՈՒԹԵԱՆ



Եւ ԿԱՐՕ ԹՈՒԳԱԹԼԵԱՆ, 64 տարեկան, ամփսնեքէ ի վեր կը տառապիմ Leukemia-է (արեան քաղցկեղ): Յաղթելու համար այս հիւանդութեան, պէտք ունիմ որոշ տեսակի՝ ինժի յարմարող արիւնի: Եթէ յարմարող արիւնը գտնուի, տուող ենթական ոչ մէկ վտանգ կամ դժուարութիւն պիտի չունենայ. պարզապէս՝ յատուկ գործողութեամբ մը, մէկ թուէն առնուած արիւնը, միւս թուէն իրեն ետ պիտի ներարկուի: 18 տարեկանէն վար եղողները չեն կրնար օգնել ինձի: Կրնաք ինձի հետախօսել հետեւեալ թիւով՝ (818) 415-4661: Հաճեցէք օգնել ինձի, այլապէս կրնայ շատ ուշ ըլլալ:

Կանխայայտ շնորհակալութեամբ՝
ԿԱՐՕ ԹՈՒԳԱԹԼԵԱՆ

**Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863**



AGBU



LARK MUSICAL SOCIETY

Zemiré

Չ Է Մ Ի Բ Է



A New Production by
AGBU ARDAVAZT THEATER COMPANY
AND
LARK MUSICAL SOCIETY

Dikran Tchouhadjian

ZEMIRÉ

Opera Semiseria in Four Acts

Stage Director:
KRIKOR SATAMIAN

Music Director:
VATSCHÉ BARSOUMIAN

A large cast of singers, actors, chorus,
orchestra and supernumeraries.

Friday
May 30, 2008, 8:00 pm
Saturday
May 31, 2008, 8:00 pm
Sunday
June 1, 2008, 3:30 pm

Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA

